

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

V170

C1726 n 719

Կ Ո Ր Ո Տ
Կ Ա Յ Ծ Ա Կ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ЕВРОПЕЙСКИХ
АКАДЕМИЙ НАУК
СССР

ԵԼԵԲՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(16 նկարով)

551.5
9-93

ՍՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅՈՍԿՎԱ 1926

Մ 1110
U
C 21277

Մ. ԳՐԵՄՅԱՑԿԻՅ

ժողովրդական
20 JUL 2010
ВНДЛ ИСТЕК
ИНСТИТУТ
ЕСТОРОСВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՎՈՐՈՏ, ԿԱՅԾԱԿ
ՅԵՎ
ԵԼԵԲՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(16 նկարով)

Թարգմ. ուսու.
ՍԻՄ. ՀԱՄԱԼՅԱՆ

Հ ա Վ Ե Լ Վ ա ծ

Ելեֆտրոնիկաւարարարութեան խորհուրդ. Հայաստանում

122 MAR 2013

12112

Напечатано в типографии Госиздата
„Красный Пролетарий“. Москва,
Шименовская ул., д. № 16,
в количестве 4000 экз.
Главлит № 54314.



59618-66

ՆԵՐՍԾՈՒԹՅՈՒՆ

Ամառային ծանր աշխատանքների ժամանակ քաղաքից հյուրեր յեկան գյուղ: Դրանք բանվորներ եյին ֆաբրիկաներից և գործարաններից: Յեկավ և ծերուկ Թոմասի վորդին—Սաքոն. նա ամբողջ տարին գյուղում չէր յեղել: Սաքոն աշխատում էր Մոսկվայում՝ գործարանում, յերեկոները վազում էր բանֆակ, այնտեղ սովորում էր ու գրքեր կարդում: Իսկ անցյալ տարի լուր տարածվեց գյուղում, թե Սաքոյին ուղարկել են սովորելու—ուսանող Ե դարձել: Այդ սրվանից ամբողջ շրջանում սկսեցին նրան ուսանող կոչել:

Թոմասը շատ ուրախ էր Սաքոյի գալուն: Կողմի տնտեսության մեջ, իսկ տնտեսությունը կարոտ Ե կազդուրման: Յերկու տարի առաջ դժբախտություն էր պատահել Թոմասին—նրա խրճիթը այրվել էր կայծակից: Հազիվ-հազ շրտկվեց ծերուկը: Դեռ լավ, վոր ընտանիքը միաբան էր. մեծ վորդին, վոր ամուսնացած էր, ոգնեց հորը. Սաքոն էլ, չնայած վոր ջահել էր, յուր աշխատավարձից նույնպես ոգնեց հոր տրն-

տեսուլթյանը: Այժմ Սաքոն յեկավ հոր նոր խրճիթը:

Առաջին իսկ կիրակին Սաքոն սկսեց մի ինչ վոր տարրըինակ բան սարքել: Ճարեց մի տեղից յերկար յերկաթե ձող, դա ամբացրեց նոր խրճիթի կտրին, իսկ ձողից դեպի վար հաստ յերկաթե թել, յերեք կարգ, ասես աղջկա մազ, հյուսեց ու գետնի տակ իջեցրեց: Գետնի մեջն ել ինչ-վոր բան սարքեց, սակայն հարևանները չհասկացան թե բանն ինչու մն ե: Իսկ յերբ հարցնում էյին ուսանողին, թե եդ ինչ ե անում, կատակներով եր պատասխանում:

«Յես, — ասում եր նա, — Յեղիա մարգարեյի համար թակարդ եմ սարքում, նա հորս տնտեսուլթյանը քնասեց, — այժմ ել յես նրան իր բուլոր գործիքներով մեկտեղ գերի յեմ վերցնելու: Հենց վոր նա մեր խրճիթին կայծակով նշան առնի, իսկույն իմ ես փոսը կընկնի. են ժամանակ մենք կհիշեցնենք նրան մեր բուլոր գրկանքները»:

Ուսանողի եդ խոսքերի վրա վոմանք ծիծաղեցին, վոմանք ել բարկացան — վորոտարեր Յեղիայի համար վիրավորվեցին: Իսկ պառավները սկսեցին գուշակել Սաքոյին դաժան մահ՝ իրա անասոված խոսքերի համար:

Սակայն շուտով մի այնպիսի դեպք պատահեց, վոր շատերը մտատանջվեցին Սաքոյի հնարքի մասին:

Շոգ որ եր. ժողովուրդը դաշտում աշխատելիս քրտնաթոր եր լինում: Յերբ հարևան գյուղում դարկեցին յերեկոյան գանգերը, ամպերն սկսեցին կուտակվել, ծածկեցին վողջ յերկինքն ու պայթեց ամպրոպը: Թոմասի խրճիթի մոտից վազելիս, գյուղացիները նկատեցին, վոր Սաքոն կանգնած ե բակում, ծածկուլթի տակ և ուշիուշով նայում ե իր ձողին: Հարևան յերեխաներն ել խմբվել են — անձրևից չեն վախենում: Ու հանկարծ փայլեց կայծակը, այնպես՝ վոր աչքըները ցավեցին, և այնպիսի հարված լավեց, ասես թնդանոթ արձակեցին: Փողոցից անցնողները քիչ մնաց վախից գետին թափվեցին: Իսկ յերեխաները բղավում են — «խփեց, խփեց Սաքոյի յերկաթե ձողին»: Ուսանողը մոտեցավ յուր թելին, շոշափում ե մատներով. «Տաք ե, — ասում ե, — չեյի կարծում, վոր իմ շանթարգելը այսքան շուտ պիտի պետք գա. առանց նրան նոր խրճիթն ել կվառվեր, ու այսպիսի քամուն՝ կրակը գուցե ման գար վողջ գյուղով»: Շուտով ամպրոպը պակասեց, քիչ անց, անձրևն ել դադարեց: ժողովուրդը փողոց յերավ ու սկսեցին ամեն տեղ խոսել, թե ինչպես կայծակը խփեց Սաքոյի կառուցվածքին: Յեկան հարևան գյուղից ու պատմեցին, թե այնտեղ կայծակը խփել ե գանգատանը, ծերուկ ժամկոչին խլացրել,

նա հազիվ վողջ ե մնացել: Լսեց այդ մասին Սաքոն
և ասաց. «Ավելորդ չե՞ր լինի, վոր բոլորդ
ել իմանայիք, թե ինչպես ե կառուցվում շանթ-
արգելը, ելեքտրականության մասին ել իմանա-
յիք: Ով ցանկութուն ունի, վաղը թող գա գյու-
ղի խրճիթ-ընթերցարանը. յես կպատմեմ՝ ինչ-
քան զիտեմ. իսկ գավառի ընկերներից մոզա-
կան պատկերներ կբերեմ և ցույց կտամ»:

Յեթե այդ կայծակի դեպքը չլիներ, քչերը
կերթային Սաքոյին լսելու. իսկ այժմ հավաքվեց
ժողովուրդը—ավելի, իհարկե, յերիտասարդու-
թյունը. սակայն հասակավոր գյուղացիներն ել
յեկան, գեղջիուհիներն ել:

Հասակավորներին ավելի ելքտրականությու-
նը գրավեց, սակայն թվում եր նրանց, թե ի
գուր ե Սաքոն ելեքտրականությունը խառնում
կայծակի հետ, բայց և այնպես՝ յեկան:

ԵԼԵԹՏՐԱԿԱՆ ԿԱՅԾԻ

Սաքոն ինչպես ասաց, այնպես ել արավ:
Գավառից բերեց նկարներ և այլ գործիքներ:
Բոլորն ել գրեթե շատ հասարակ իրեր եյին
— գմուռի (կնքամոմ) կտոր, մի կտոր խեժ
(ձյութ), ապակյա ձողիկ, թղթի կտորներ: Այդ
իրերի թվում կար նաև մի ինչ վոր տարրինակ

մեքենա, նման մի մեծ անիվի, ապակյա կոթով
ու շուրջը պղնձե ձողերով, ասես շրջանակած:
Յերբ հավաքվեցին, Սաքոն սկսեց յուր գրույցը
այսպես.

«Մեծ գործ ե շանթարգելը, իսկ սկսվել ե նա
փոքրիկ, չնչին բանից: Ահա իմ ձեռքում տես-
նում եք սանր, սովորական սանր, վորով սա-
նրվում են: Նրա մեջ առանձին վոչինչ չկա:
Բայց ահա յես նրան ամուր կշփեմ մահուղե
վարտիկիս ու իմ սանրը կսկսի բոլորովին այլ
գործ կատարել: Ահա մոտեցնում եմ յես նրան
թղթի փոքրիկ կտորներին— ու նրանք ցատկում
են դեպի սանրը, կպչում նրան: Ուրեմն՝ շփված
սանրը սաքայլ լոր ուժ, սկսեց քաշել դեպի
իրեն թղթի կտորները: Ով չի հավատում, թող
ինքը փորձի:

— Իսկ դու, ախպեր, սոսինձ (թութխալ)
չե՞ս քսել նրան,— հարցրեց առաջին նստարանին
նստած պատանիներից մեկը: Յերեխաները սկը-
սեցին ծիծաղել:

— Դու, Գիքո, առ նրան ձեռքդ և փորձիր,
դե, վորցրու, մի վախենա: Այ, տեսա՞ր, նա քո
ձեռքին ել գործում ե ու վոչ մի սոսինձ նրա
վրա չկա:

— Բանը այստեղ սանրի մեջ չե, այլ նրանում,
վոր յես նրան ամուր շփում եմ: Ահա այժմ յես

կվերցնեմ զմուռը, նրան ել նույնպես կշփեմ—
տեսեք, նա յեւ քաշում ե թղթի կտորները, զը-
մուռին ել են կպչում նրանք: Այժմ շփում եմ
ապակյա ձողիկը—նա յեւ նույնն ե անում: Շատ
ու շատ այլ առարկաներ, յեթե շփես նրանց,
նույնպիսի հատկութիւնն են ստանում: Մարդիկ
այդ բանը վաղուց են նկատել: Այդ բանը առա-
ջին անգամ, հին ժամանակները, նկատել են
հույները մակարդոված խեժի—սաթի վրա: Նրանք
սաթը անվանում եյին «եյֆօրոն»—սրանից ե
առաջ յեկել ելեքարականութիւնն խոսքը: Սկը-
սեցին ասել, թե հենց այդ ելեկտրական ուժն ե
գործում սաթի ե այլ իրերի մեջ, նա յե քաշում
թղթի թեթե կտորները...

— Ե՛րհնչ ելեկտրականութիւնն ե եստեղ,—լըս-
վեց մի ձայն յետին կարգերից,—եդ մագնիսն
ե, վոր քաշում ե զանազան առարկաներ: Իմ քե-
ռին ել ունի մագնիս—կարմիր պայտածե (նալի
նման): Յեթե մութ ժամանակ բանալին կորցը-
նես, մագնիսով հատակը շոշափիր ե նա կգտնի:
Խոշոր մագնիս ե, մի ամբողջ բուռը մեխ ե վեր-
ցնում:

— Այդ ճիշտ ե,—ասաց Սաքոն,—մագնիսը
քաշում ե յերկաթե իրեր, բայց մագնիսն ու
ելեքտրականութիւնը միևնույն բանը չեն: Դե,
ինքդ մտածիր, — մի՞թե մագնիսը պետք ե

շփել մահուդին, վորպեսզի նա մեխը քաշի, վոչ,
նա առանց այդ ել կքաշի: Հետո՞ մի այլ տար-
բերութիւնն ել կա՞ մագնիսը դեպի իրան չի քա-
շի թղթիկները ե կամ վորեւե փետրիկ, իսկ շրվի-
ված զմուռը դեպի իրենն ե քաշում ամեն տե-
սակի մանրույթ: Մագնիսն ու ելեքտրականու-
թիւնը բոլորովին տարբեր բաներ են:

Վորպեսզի ամենքը լավ տեսնեն, թե ինչպես են
քաշվում մանր իրերը, յես կտրել եմ թանթըր-
վենուց*) (շամբուկ, бумажка) մի փոքրիկ գնդակ ու
մետաքայա թելով կապել նրան հենարանից:

Սաքոն ցույց տվեց այդ բանը (Տես Ակ. 1):

— Հենց վոր յես մոտեցնեմ այդ գնդակին
նախապես շփված ապակյա ձողիկը կամ զմուռը,
գնդակը իսկույն դեպի ձողը կքաշվի:


— Այժմ բոլորդ տեսնում եք:

— Լավ ենք տեսնում, ուղիղ ե,—խոսեցին
ամեն կողմից:

— Ասենք եդ եղպես ե,—սքսեց մի տարի-
քավոր գյուղացի,—բայց դու մեզ խոստացել
եյիր ասել շանթարգելի մասին, իսկ խոսում
ես ելեկտրականութիւն մասին, են ել վոչ իս-
կական, այլ մի ինչ վոր խաղալիքի, վոր սան-
րից ու զմուռից ե գալիս ու փետրիկներ քա-
շում: Մենք ուզում ենք լսել ե իմանալ այն

*) Մի շատ տարածված բույս ե:

ելեքտրականութեան մասին, վոր այժմ, ասում են, շատ գյուղերում կա. կմասնես խրճիթը, չիկ՝ ու լուսացավ. նայում ես՝ վառվում ե լամպիկը



Նկ. 1. Մետաքսե թելով կապված թան-
թրակնու գնդակը քաշվում է դեպի սպա-
կյա ձողիկը:

պատասխանեց Սաքոն, — հենց այդպիսի ելեքտրա-
կանություն է հարկավոր գյուղին: Հենց դրա մասին
ել խոսելու յեմ, բայց միանգամից չես հասկա-
նա: Կաց մի քիչ, շանթարգելի մասին ել, ելեք-
տրականութեան մասին ել կասվի ճշմարտությունը:

— վոչ հոգս, վոչ
տանջանք: Վոչ նավթ
պետք է, վոչ լուցկի:
Կամեցար գիշերը
տավարդ նայել —
դուրս յեկար բակ՝
չիկ — ու ամեն ինչ
աչքիդ առաջն է:
Իսկ թե վորեւե այլ
բան անել ցանկա-
ցար — համեցեք. խց-
կեցիր մի ինչ վոր
բան, ու կալումդ
շարժվեց քո կալսի-
չը: Ահա այս է ելեկ-

տրակնությունը:
— Ճիշտ ես աս-
ում, քեռի Գևո, —

Բանը նրանուհին է, վոր յեթե մարդիկ չիմանա-
յին նախ այն մասին, թե ինչպես շփված զմուռը
թղթի կտորն է քաշում, նրանք վոչ շանթ-
արգել կունենային, վոչ ելեքտրականություն:
Այժմ լսեցեք, պատմեմ կարգով:


Գիտնականները ուզեցին իմանալ, թե այդ
ինչ ուժ է, վոր կա շփված սաթի կամ մի կտոր
խեժի մեջ: Պետք ել չկար, իհարկե, թղթիկնե-
րով զբաղվելու: Վորոշեցին փորձել, արդյոք խե-
ժի կամ ծծումբի մեծ կտորի մեջ չի՞ լինի ավե-
րի մեծ ուժ, վոր կարող լինի ավելի պիտանի
լինել, քան թղթիկներ քաշելը: Սկսեցին գիտ-
նականները վերցնել ավելի խոշոր կտորներ ու
ու ավելի ուժով շփել: Իհարկե, մեծ կտորի վը-
րա ամեն ինչ ավելի պարզ է յերևում: Մի գեր-
մանացի — նա քաղաքագլուխ եր — ամբողջ որե-
րով զբաղված եր զանազան փորձերով: Վորպես
զի ավելի հեշտ լինի շփելը, նա հնարեց մի
մեքենա: Ծծմբյա մի մեծ գնդակ անցկա-
ցրեց առանցքով, իսկ վերջինս ամբացրեց դադ-
գահի մեջ, այնպես, վոր գնդակը կարելի յեր
մեկ ձեռքով շրջել, իսկ մյուսով նրան սեղմել,
վորպեսզի շփվի, ստանա ելեքտրականություն:
Այդ բոլորը յես ձեզ ցույց կտամ այս նկարի
վրա (Տես նկ. 2):

Տեսնում եք գունդը, նա ծծմբից է, մարդ-

կային զլիւից մեծ, նա ունի փայտյա մի կոթ, վորով շրջում եր դերմանացին:

— Իսկ ի՞նչ ե անում նա յուր գնդով,— հարցրեց Գիբոնն,— ասես նրանով մի բան ե բռնում:

— Այդպիսով նա չի թողնում, վոր փետու-



Նկ. 2. Առաջին ելեքտրական մեքենան:

րը գետին ընկնի: Բանը նրանուամն ե, վոր այդ գիտնական գերմանացին իր մեծ գունդի վրա տեսավ մի բան, վոր առաջ վոչ վոք չեր նկատում, նա տեսավ, վոր թանթրվենու գնդակը վոչ միայն ֆաշվում, ձգվում ե դեպի գունդը,

այլով հետո յիս ե ցատկում նրանից, կարծես յետ ե մղվում մեծ գունդից: Այսպես ե լինում. գունդը լավ շփում են, լեցնում նրան ելեկտրականությամբ և հետո այդ լեցված գունդին մոտեցնում են թանթրվենու փոքրիկ գնդակը: Սկզբում նա քաշվում, ձգվում ե ու մեծ գունդից ինքն ել լեցվում ե ելեկտրականությամբ, իսկ լեցվելուց հետո վոստնում ե նրանից, կարծես մեկը նրան հրեց: Նույնը անում ե փետուրը ու ամեն տեսակի մանրույթ: Գունդը փետուրին վոր մոտեցնես, վերջինս նախ կընկնի գունդի վրա և ապա, լեցվելով ելեքտրականությամբ, կթռչի նրանից, ասես մեկը փչեց: Յեթե փետուրը թռչի վեր, իսկ մենք ել բարձրացնենք գունդը, փետուրը նրանից ավելի և ավելի կհեռանա. յեթե գունդը բռնենք յերկար ժամանակ միևնույն տեղում— փետուրի տակ, վերջինս յերկար ժամանակ չի ընկնի գունդի վրա, քանի վոր նա դեռ լեցված ե, հետո կրկին կձգվի դեպի գունդը, կրկին կլեցվի ելեկտրականությամբ ու նորից կվոստնի դեպի վեր: Հենց այդ ե պատկերացված նկարի վրա:

— Ուրեմն, յեթե վերցնենք յերկու գունդ ելեկտրականությամբ, նրանք մեկգմեկուց կհրվե՞ն,— հարց տվեց քեռի Գեոն:

— Այդպես ե, բայց վոչ բոլորովին: Ահա ինչ-

պիսի բան նկատեցին գիտնականները: Ապակյա ձողիկը շփեցին, այսինքն լցրին նրան ելեկտրականութեամբ. այդ լեցված ձողիկը մոտեցրին թանթրվենու գնդակին. վերջինս, ինքնըստինքյան, սկզբում ձգվեց դեպի ձողը և ապա, լեցվելով, յետ մղվեց: Այժմ արդեն նա ինքը լեցված է ելեկտրականութեամբ: Գիտնականը վերցրեց մի կտոր խեժ (ձյուժ) ու նրան շփեց. գիտնականը մտածում էր՝—այժմ կմոտեցնեմ յետ այս լեցված խեժը լեցված գնդակին ու նա յետ կմղվի նրանից: Ասաց ու արավ. մոտեցնելը մոտեցրեց, բայց թանթրվենու գնդակը վոչ միայն յետ չմղվեց, այլ, ընդհակառակը, արագորեն մոտեցավ խեժի կտորին, կպավ նրան ու ապա միայն հրվեց: Գիտնականը մտածեց՝ արդյոք վորևէ սխալ չի՞ յեղել. գուցե ելեկտրականությունը գնդակից արդեն հեռացել էր, քանի դեռ նա խեժն էր շփում, կամ մի ուրիշ սխալ է յեղել: Փորձեց ելի ու ելի, ամեն կերպ ման բերեց—միևնույնն է ստացվում: Ահա, ինքներդ նայեցեք, յետ այդ ձեր առաջ կփորձեմ. ահա շփում եմ մահուղով ապակյա ձողիկը և նույն մահուղով շփում եմ խեժի կտորը. այժմ լեցնում եմ գնդակը ապակյա ձողիկով. տեսնո՞ւմ եք՝ գնդակը ձողիկից հրվում է. մոտեցնում եմ խեժը գնդակին—նա ամբողջ ուժով ձգվում է

դեպի խեժը ու ապա միայն յետ հրվում...

— Իսկ յեթե այժմ նորից ապակյա ձողիկը մոտեցնես,—հարցրեց մեկը:

— Մոտեցնում եմ, այժմ գնդակը դեպի ձողն էլ է ձգվում: Ինչպե՞ս հասկանալ այդ: Մեր գիտնականը սկսեց զանազան այլ առարկաներ փորձել ու տեսավ, վոր լեցված գնդակը վոմանց ձգվում է, իսկ վոմանցից՝ հրվում: Շփված առարկաներից մի քանիսը գործում են ապակու պես, մյուսները՝ խեժի պես: Յե՛վ ահա գիտնականները սկսեցին խոսել յերկու տարբեր ելեկտրականությունների մասին՝ ստատիկա ու յստիկա, և ապա, վոր խեժյա ելեկտրականությունը հրվում է խեժյայից և ապակյան՝ ապակյայից: Յերկու միատեսակ ելեկտրականություն չեն կարող միասին մնալ, ձգտում են բաժանվել իրարուց: Իսկ ապակյան խեժյային ձգվում է ամբողջ ուժով, ձգտում է նրա հետ միանալ: Այդպես էր հին ժամանակներում. ասում էյին այն ժամանակ՝ ապակյա ելեկտրականություն, խեժյա ելեկտրականություն. հետո սկսեցին դրա փոխարեն այլ խոսքեր գործածել. այժմ գիտնականները ապակյա ասելու փոխարեն ասում են «դրակալ» ելեկտրականություն, ու խեժյայի փոխարեն՝ «քստալակալ»: Այսպես, կարծես, ավելի լավ է հնչում: Ուրեմն, դրակալ ելեկտրականությունը

բացասականին ձգվում է, դրականը՝ դրականից ու բացասականը՝ բացասականից հրվում են: Ինչի մեջ ավելի շատ ելեկտրականություն է կուտակվում—նա ավելի ուժեղ է գործում. վորքան ավելի մեծ է լեցվածքը—այնքան ավելի յերկար է պահպանվում, սակայն յեթե դրական ելեկտրականությունը միանում է բացասականի հետ—նրանք յերկուսն էլ պարպվում են—ու ելեկտրականություն չկա այլևս:

— Իսկ շատ ուժեղ պետք է շփել, վորպեսզի լեցվածքը մեծ լինի—հետաքրքրվեց տղաներից մեկը:

— Այո, այն գերմանացին, վորի մասին յես պատմում եմ ձեզ, այնպես էր շփում յուր գունդը, վոր նրա ճարճատյունն էր լսվում, իսկ գիշերները նա լուսավորվում էր:

— Ահա՛ թե ինչ, ուրեմն մեր կատվի մեջ ելեկտրականություն կա,—ասաց մի աղջիկ, կարմրելով: Մի որ կատուն նստած էր հայրիկի մուշտակի վրա, իսկ մենք նրան շփում էյինք, շփում ու սանրով սանրում, հանկարծ տեսանք, վոր նրա մազերից կայծեր են թափվում—մենք սաստիկ վախեցանք. տատիկը ասաց, վոր դա կատու չէր, այլ վհուկ: Մի ուրիշ անգամ շատ շփեցինք, բայց վոչինչ չստացվեց:

— Ուղիղ ես ասում վարսիկ,—վրա բերեց

Սաքոն, — յեթե կատվի բուրդը սանրես—կստացվի ելեկտրականություն, իսկ նրանից՝ կայծեր: Մի գիտնական շփում էր մի մեծ կտոր սաթ է սպա մոտեցրեց նրան մատը — սաթից կայծ դուրս թռավ, ուղիղ նրա մատին:

— Ու մատը այրվե՞ց:


— Չե, վոչինչ. սակայն գիտնականը խոստովանում էր, թե մի այլ անգամ վոչ մի դեպքում ու վոչ մի գնով չի համաձայնի այդպիսի հարված ստանալ: Նա ասում էր, թե կայծը կեռած է յեղել ու այնպես է ճայթել, ասես մեկը ատըրճանակ է արձակել: Դեռ այն ժամանակ գիտնականը մտածել է՝ շատ է նման այդ կայծը կայծակի, ափսոս, վոր շատ փոքր է:

— Եդ ինչո՞ւ է, վոր գիտնականները խեժն ու ապակին են շփել ելեկտրականություն ստանալու համար. չե՞ վոր ելեկտրականությունը անցնում է յերկաթե ու պղնձե թելերով: Յեթե մի կտոր յերկաթը կամ պղինձը շփենք—կստացվի ելեկտրականություն, — հետաքրքրվեց մի գյուղացի, վոր առաջ քաղաքում էր ապրում:

— Ահա յես վերցնում եմ յերկաթե ձողակ (բոլա) ու շփում մահուղով. տեսնո՞ւմ եք—նա թանթրվենու գնդակը վո՛չ ձգում է դեպի իրեն և վոչ էլ հրում իրենից: Հին ժամանակները, յերբ գիտնականները փորձում էյին շփել յեր-

99-81965

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ՄԻՈՒՆԻՍՏԵՐԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱՎԵՍՏԻՅԱ
ՀԵՐԱԿԱՆ
ՀԵՐԱԿԱՆ




կաթը, պղինձը, արծաթը, ածուխը, վոսկորը— բոլոր այդ առարկաները ելեկտրականությունն չեյին տալիս: Ու յեկան այն վորոշման, վոր այդ բոլոր առարկաները ելեկտրական չեն, վոր ինչքան ել նրանց շփես—ելեկտրական ուժ նրանց մեջ չի լինի: Սակայն, գիտնականները սխալվում էյին: Ահա տեսեք, թե յես ինչ կանեմ:

Սաքոն վերցրեց մի կտոր ուտին հին կրկնակոշիկից, փաթաթեց նրա մեջ—ասես լաթի մեջ—յերկաթե ձողակի մի ծայրը, հետո այդ փաթաթած ծայրը ձեռքն առավ ու նորից սկսեց շրփել ձողակը. ապա մոտեցրեց գնդակին—գնդակը նախ ձգվեց, ապա՝ յետ հրվեց:

— Դուք տեսնում եք, վոր այժմ մեր ձողակը սկսեց այլ կերպ գործել. նրա մեջ ել առաջացավ ելեկտրականություն: Սակայն բավական ե, վոր յես զիպչեմ նրան մատովս ու ամբողջ ելեկտրականությունը կկորչի, ձողակը կպարպվի: Հարց ե ծագում—ապա ո՞ւր կորավ այդ ելեկտրականությունը: Մատիս միջոցով նա անցավ իմ մարմնի մեջ, իսկ մարմնիցս անցավ գետին: Բայց կարելի յե նրան չթողնել գետինը անցնելու: Յեթե յես հագնեմ վոտքերիս ուտինի կրկնակոշիկներ, ուտինից ելեկտրականությունը չի անցնի, ուտինը նրան չի թողնի ու նա կմնա մարմնիս մեջ: Այդ դեպքում մարդու

մարմինն ել լեցվում ե ու դեպի նրան ձգվում թանթրվենու գնդակը: Դուք իսկույն կտեսնեք այդ: Հին ժամանակները ուտինե կրկնակոշիկներ չկային, այն ժամանակ այսպես էյին անում. տղային կապում էյին ձիու մազից հյուսված պարանով (դուք այդ տեսնում եք Յոյ Ակարիվրա),



Նկ. 3. Ելեքտրականությամբ լեցված աղան ձգում ե թղթիկները:

չփում էյին աղակյա ձողիկը ու տալիս տղայի ձեռքը. նա իսկույն սկսում եր դեպի իրեն քաշել, ձգել թղթիկները, ճիշտ այնպես, ինչպես շփված սանրը: Աղակյա ձողիկից ելեկտրականությունը անցել եր աղայի մարմնին, իսկ նրանից փախչել չի կարող—բաց ճամբա չկա:

— Այդպէս ել առմիշտ ելեկտրականությունը կմնա տղայի վրա՞,—հարց տվեց մեկը:

— Վո՛չ, հենց վոր տղան վոտքը դնի գետնին—ելեկտրականությունը իսկույն կանցնի գետտին: Յեթե նույն իսկ նրան թողնեյինք այդպէս կախված, ինչպէս վոր տեսնում եք նկարի վրա, այդ դեպքում ել ելեկտրականությունը կամաց-կամաց կհեռանար նրանից: Նա կամաց-կամաց հեռանում է ապակյա ձողիկից ել, թանթրվենու գնդակից ել ու յուրաքանչյուր այլ լեցված առարկայից:

— Իսկ ինչո՞ւ տղային կապել էյին ձիու մագից հյուսված պարանով, և վոչ հասարակ:

— Վորովհետեւ հասարակ պարանով ելեկտրականությունը իսկույն և յեթ կանցնի ու կգնա, ինչպէս թելերով, իսկ ձիու մագով և կամ մետաքսե թելով նա չի անցնում: Դուք ասել եք, թե ինչպէս է ամրացվում թելը հեռագրական սյուների վրա. նա այնտեղ չի կախված յերկաթե կեռերից, այլ անց է կացված հատուկ ձերմակ հենակներից (բանկաների նման), վոր կոչվում են իզոլյասոր (մեկուսացնող). նրանք չեն թողնում, վոր ելեկտրականությունը թելերից հեռանա: Յեթե այդ իզոլյատորը ջարդվի ու թելը կախվի սյունի վրա, ելեկտրականությունը իս-

կույն կփախչի սյունի վրայով գետին ու հեռագիրը չի գործի:

— Իսկ հարևան գյուղի հովիվները միշտ քար են նետում այդ «բաժակներին», պահապանը հետապնդում է նրանց, հայհոյում,—սկսեց պատմել տղաներից մեկը:

— Հովիվները չեն հասկանում, վոր իրանց չարությամբ կարող են վնասել ժողովրդական գործին: Հեռագրաթելով գուցե այդ ըսպեյին անցնում է բոլորի համար կարևոր մի հրաման, գիցուք՝ պարենհարկի ժամանակի հետաձգման և կամ չունեորներին սերմացու տալու մասին. հրամանը կուղարկեն, իսկ նա ժամանակին տեղ չի հասնի, վորովհետեւ հաղորդակցությունը խզված կլինի, կարող է պատահել, վոր հենց նույն այդ հովիվներին սերմացու տալու գործը հետաձգվի իրանց իսկ մեղքով:

— Տեղին կլինի,—մըթմըթաց քեռի Գևոն, վոր լսում եր ուշադրությամբ:

— Նրանց տեղն է, բայց ախոսս նրանց պատճառով ուրիշներն ել կտուժեն,—լսվեց մի այլ տեղից անբավական ձայն:


Սաքոն ինդրեց, սակայն, չաղմկել, վորպեսզի զրույցը չձգձգվի: Նա շարունակեց.

— Գործին անցնենք: Գիտնականները ուզում էյին մի միջոց գտնել, վորպեսզի ելեկտրակա-

նությունը շուտով չհեռանա լեցված մարմնից: Չանազան միջոցներ փորձեցին: Մեկը մտածում էր՝ արդյոք բաժակի միջի ջուրը ելեկտրականությունը չի բռնի. ապակուց ելեկտրականությունը չի անցնում—ապակին իզոլյատոր է (մեկուսացնող): Այդ գիտնականը շփում էր մի մեծ ապակյա գունդ, նրանից թեկ անցկացրեց յերկաթե տափակ ձողիկի վրա, իսկ այդ տեղից մի ուրիշ թեկ անցկացրեց ջրով լի բանկայի մեջ. նրան ոգնում էր ընկերը, վոր բռնած էր բանկան. անա այս նկարի վրա գուք այդ տեսնում եք (նկար 4-րդ):

Մարքեցին, անցան գործի: Գիտնականի ընկերը պատահամբ մոտեցնում է մատը այն թեկին, վոր բանկայի մեջ էր անցկացված, ու այնպես է բղավում, վոր հագիվ պահում է բանկան ձեռքում. պարզվում է, վոր նա թեղից ստացել է ուժգին ելեկտրական հարված: Այն ժամանակ գիտնականը ինքը սկսում է փորձել ու տեսնում է, վոր այդպիսի բանկայում ելեկտրականությունը իսկապես ավելի յե կուտակվում ու ավելի յերկար մնում: Այդ տեղի յե ունեցել Հոլլանդիայում, Լեյդեն քաղաքում: Սրանից և այդ բանկաները սկսեցին կոչվել լեյդենյան: Այդ բանկաները կարելի յե շատ ուժեղ չափերով ելեկտրականությամբ լեցնել ու նա այդպիսի բան-

կայի մեջ պահպանվում է: Նրան սարքելը շատ հեշտ է. ապակյա բանկայի մեջ ջուր լեցնել, մեջը դնել մի մեծ մեխ, դրսից բանկան փաթաթել կապարի (արձիճ) թղթով, վորով սովորաբար թեյ են փաթաթում, արտաքուստ բանկան



Նկ. 4. Բանկայով փորձը Լեյդեն քաղաքում:

ըրջապատել: Յեթե բանկան ձեռներս վերցնենք ու մեխը դնենք ելեկտրական մեքենային,—բանկան ուժգնորեն կլեցվի: Պարզվեց, վոր ելեկտրականությունը կլինի մեխի վրա, այլև արսափն շրջապատի. պարզվեց նաև, վոր յեթե մեխը լեցվի դրական ելեկտրականությամբ—ըրջապատի վրա

կլինի բացասականը և, ընդհակառակը, յեթե մե-
խը լեցված է բացասական ելեկտրականությամբ,
շրջապատը լեցված կլինի դրականով: Եդ ինչ
հրաշք է. չե վոր մեխի ու շրջապատի միջև գտն-
վում է բանկայի ապակին, այսինքն մի մեկու-
սացնող առարկա, վոր ելեկտրականությունն չի
թողնում. վորտեղից է ապա ստացվում ելեկ-
տրականությունն շրջապատի վրա և այն ել տար-
բեր, քան մեխի վրա: Յերկար ժամանակ մտա-
ծում եյին գիտնականները այդ մասին, մի շարք
փորձեր անում ու, վերջապես, հասկացան: Վո-
րոշեցին՝ արտաքին շրջապատի ելեկտրականու-
թյունը մեխի վրայի ելեկտրականության ար-
տացույումն է, նա առաջանում է նրանից, վոր
կուտակվում է ելեկտրականությունը մեխի վրա.
սկսեցին նրան անվանել ազդեցական (ազդեցու-
թյան միջոցով ստացվող) ելեկտրականություն:
Յեթե մի տեղ կուտակվում է ելեկտրականու-
թյուն—նրա հարևանությամբ ևս ելեկտրականու-
թյունն է առաջանում: Ի՞նչպիսի: Յերկուսն ել—
թե դրական և թե բացասական. յեթե մեխի վրա
կուտակվում է դրական ելեկտրականություն—
շրջապատի վրա առաջանում են յերկուսն ել՝
թե դրական ու թե բացասական:

— Ապա ինչո՞ւ ստացիր, թե շրջապատի
վրա միայն մի ելեկտրականություն կլինի:

— Հենց այդպես ել է: Շրջապատը մարդ
ձեռքով է բռնած. ի՞նչ է ստացվում դրանից.
մեխի վրայի դրական ելեկտրականությունը դե-
պի իրան ձգում է շրջապատի վրայի բացասա-
կան ելեկտրականությունը, իսկ դրականը դեն
է հրում շրջապատի վրայից. ուրեմն, դրականը
շրջապատի վրայից անցնում է մարդու ձեռքին,
այնտեղից ել—գետին, իսկ բացասականը չի գը-
նում—նրան քաշում, պահում է մեխի վրայի
դրականը: Յեթե մեկ ձեռքով վերցնենք բանկան,
իսկ մյուսով դիպչենք մեխին—այդ յերկու ելեկ-
տրականությունը մարդու մարմնի վրայով կա-
րող են միանալ, պարպվել: Յերբեմն այդ պար-
պումը այնքան ուժգին է լինում, վոր մարդուս
սարսռեցնում է ու ստիպում նրան ուրիշ ան-
գամ վախով մոտենալ լեյդենյան բանկային:

— Դե, մեդ ի՞նչ է պետք եդ բոլորը: Խոս-
տացար շանթարգելի ու կայծակի մասին պատ-
մել, իսկ զրուցում ես բոլորովին այլ բաներից,
—նկատեց ունկնդիրներից մեկը:

— Ահա թե ինչու յե պետք. ամպերի մեջ
ել կա յեկտրականություն, յերկրի վրա յել է
դուրս գալիս. թե յերկրի, թե ամպերը մի հըս-
կայական լեյդենյան բանկա յե, իսկ ողը, ասես,
այն ապակին, վոր մեկուսացնում է շրջապատը
ջրից:

— Ե՛, եղ արդեն դուրս տվիր, իսկ ո՞վ շփեց ամպերը, և ինչպե՞ս իմացան այդ մասին. ո՞վ ե տեսել այդ ելեկտրականությունը:

— Այժմ մենք նրան չենք կարող ստանալ, բայց առաջին իսկ ամպոտ ուրը, հենց վոր սկըսվի ամպրոպը հավաքվել, յես ձեր ներկայությամբ ամպերից ելեկտրականությունն կստանամ և դուք կտեսնեք, վոր նա տալիս ե նույնպիսի կայծ, ինչպես և ամեն մի այլ ելեկտրականություն: Յեկեք, հենց Յեղյայի ուրը անենք այդ փորձը—գուցե հաջողվի մեզ. իսկ այժմ արդեն ուշ ե—քնելու ժամանակ ե: Փակենք ժողովը:

Ժողովուրդը ցրվեց: Գյուղի յերիտասարդությունը անհամբերությամբ սպասում եր Յեղյայի ուրին, վորպեսզի տեսնի հետաքրքրական փորձը: Ավելի հասակավորները կասկածանքի մեջ եյին, թեև հավատում եյին Սաքոյի ասածներից շատերին: Յեվ ինչպե՞ս չհավատաս, քանի վոր փորձերով ե հաստատվում ու պատկերների վրայ յերևում:

ԻՆՉՊԵՍ ԿԱՅԾԱԿԸ ԱՄՊԵՐԻՅ ԳԵՏԻՆ ԻՋՆՅՐԻՆ

Վրա հասավ Յեղյայի ուրը: Ուսանողի համար շատ հարմար յեղանակ եր. առավոտուց փոքրիկ ամպերը ծածկեցին յերկինքը, իսկ կեսորին նրանք սկսեցին մթնել: Մինչ այդ Սաքոն անցավ աշ-

խատանքի. նա վերցրեց յերկու փայտյա նեղ ու բարակ տախտակ, ամբայրեց նրանց խաչաձև, այդ շրջանակի վրա ձգեց մի մետաքսե թաշկինակ ու կապեց յերկար թոկ, իսկ նրա ծայրը կապեց ապակյա ձողիկին: Մի խոսքով, սարքեց «ոդանոձ», սակայն վոչ թե թղթից, ինչպես յերեխաներն են սարքում, այլ մետաքսե թաշկինակից: Յերը նա տարավ այդ «ոձը» դաշտ—յերեխաներն ու ջահել տղերքը հետևեցին նրան. ամենքը սպասում եյին, թե ինչպես նա յերկնքից ելեկտրականություն պիտի իջեցնի: Բայց Սաքոն, դրա փոխարեն, սկսեց խաղալ «ոձով». հանձնարարեց տղաներից մեկին տանել «ոձը» հեռու, իսկ ինքը, ապակյա ձողիկը բռնած, վազեց քամու հանդեպ: «Ոձը» սահուն կերպով բարձրացավ դեպի վեր: Սաքոն կանգ առավ, իսկ «ոձը» բարձրանում եր ավելի ու ավելի վեր: Թվում եր, թե նա ամպերի յետևն ե արդեն:

— Այժմ—ասում ե Սաքոն—ելեկտրականությունը ամպերից այս թոկով վայր կիջնի:—Սակայն ամպը անցավ կողքից:

— Բա ո՞ւր ե ելեկտրականությունը,—հարցրին վոմանք ու սկսեցին ծիծաղել:

— Ահա նա, նայեցեք,—ասաց Սաքոն և ցույց տվեց պարանի ծայրը: Յեվ իսկապես—պարանի թելերը սկսեցին բարձրանալ ու ճարճատել:

— Ահա՛ — ու՛վ չի հավատում՝ թող բռնի պահանքը: — Զահել տղաներից մեկը վախժխելով պարզեց ձեռքը ու անմիջապես յես քաշեց, բղավելով. պարանից ուղիղ նրա ձեռքին թռավ մի կայծ: — Ուռա՛ — բղավեցին յերեխաները: — Կեցցես, Սաքո, գործում ե քո «ոձը». իսկապես վոր ամպերից ելեկտրականությունն ե գալիս: — Սակայն Սաքոն արդեն իջեցնում եր «ոձը», վորպեսզի ավելի խոշոր կայծեր չվոստենն: Հետո բոլոր ներկա յեղողներին նա նշանակեց գալ խըրճիթ-ընթերցարան՝ նոր գրույցի:

ԻնՉ Ե ԿԱՅԾԱԿԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ Ե ՆԱ ԳՈՐԾՈՒՄ

Յերեկոյան, ինչպես վորոշված եր, հավաքվեցին խրճիթ-ընթերցարան՝ գրուցելու վորոտի և կայծակի մասին:

— Ոգային «ոձի» միջոցով յերկնքից ելեկտրականությունն իջեցնելը յես չեմ հնարել, — սկսեց Սաքոն գրույցը:

Առաջին անգամ այդ վորձը արավ մի ամերիկացի, Ֆրանկլին ազգանունով: Այդ պատահեց ավելի քան հարյուր հիսուն տարի սրանից առաջ, Ամերիկայում: Ֆրանկլինը ընտրովի հասարակական գործիչ եր ու շատ եր հոգում ժողովրդի լուսավորության մասին: Յերբ տեղի ունեցավ Ամերիկայում հեղափոխությունը,

Ֆրանկլինը մասնակցում եր նոր օրենքների մշակման գործում, բաց եր անում գրադարաններ ու ընթերցարաններ, տպագրում եր թերթեր ու գրքեր եր գրում ամենադժվար հարցերի մասին այնպես պարզ ու հասկանալի, վոր բոլորը կարողանում եյին կարդալ:

Նա ժամանակ եր գտնում գիտությամբ ել պարապելու և ելեկտրականության վրա զանազան փորձեր անելու: Նա շատ անգամ նկատում եր, թե վորքան նման են ելեքտրական կայծերը կայծակին: Յե՛վ անա վորոշեց նա քննել, արդյոք հենց այդ ելեքտրականությունը չե՞, վոր գործում ե ամպերի մեջ վորթորկի ժամանակ: Ի՞նչպես անել: Ֆրանկլինը վորոշեց այսպես վարվել. — բարձր զանգատան վրա ամրացնել մի յերկար յերկաթե ձող, վորի ծայրը հասնի ամպերին. այդ ժամանակ ելեքտրականությունը ամպերից պետք ե իջնի այդ ձողով ու նրան կարելի կլինի տեսնել — ձողից կթռչեն կայծեր. բայց ցավը նրանումն եր, վոր այն ժամանակ Ամերիկայում չկար այնչափ բարձր զանգատուն, վորպիսին պահանջվում եր Ֆրանկլինին: Ծիշտ այդ ժամանակ կառուցվում եր մի շատ բարձր զանգատուն, սակայն Ֆրանկլինը չեր ուզում սպասել, մինչև նա կառուցվի: Ֆրանկլինը վորոշեց դիմել ուժի ոգնությանը:

Նա յուր վորդու հետ գնաց քաղաքից դուրս, ասես զբոսանքի, և այնտեղ փորձեց բաց թողնել մետաքսե «ոձը»: Ստացվեց նույնը, ինչ վոր տեսաք դուք անցյալ ուր դաշտում— պարանի ծայրից ճարճատյունն լավեց ու սկսեցին թռչել կայծեր, վոմանք յերկարությամբ մինչև կես արշին: Այդպես առաջին անգամ հաջողվեց մարդուն յենթարկել իրան կայծակը, իջեցնել նրան ամպերից թելի վրայով, յուր ցանկացած ճամփով...

— Իսկ յեթե կայծը սպանե՞ր նրան,—հարցրեց ունկնդիրներից մեկը:—Չե՞ վոր կայծակը շատ լուրջ բան է. մի՞թե չեր կարող պատահել:


— Իհարկե կարող էր: Այդպես էլ պատահեց հետևյալ տարին, բայց վոչ Փրանկլինի հետ, այլ մի ուսուցիչի անհայտի, վոր փորձեր եր կատարում այն ժամանակվա Պետերբուրգում (այժմ Լենինգրադ): Յերբ ուսուցիչի անհայտները իմացան Փրանկլինի գյուտի մասին, իրենք էլ գործի անցան: Առանձնապես շատ աշխատեցին նրանցից յերկուսը—Լոմոնոսովը (նա ծագումով գյուղացի յեր Արխանգելսկի նահանգից) և Ռիխմանը, վոր արտասահմանից եր մեզ մոտ յեկել: Ահա թե ինչ էր գրում Լոմոնոսովը Ռիխմանի հետ պատահած դժբախտության մասին:— «Պրոֆեսոր Ռիխմանին կայծակը սպանեց: Հուլիսի 26-ին, ցե

րեկվա ժամը 1-ին, ամպրոպը սկսվեց: Վորոտը շատ ուժգին էր, անձրև՝ վոչ մի կաթիլ: Նայելով դրված կայծակաձողին, յես չտեսա էլեքտրական ուժի վոչ մի նշան: Սակայն մինչ սեղան էյին պատրաստում ճաշի, ինձ հաջողվեց թելից ստանալ խոշոր կայծեր. այդ ժամանակ յեկավ իմ կինը, յեկան և ուրիշները. թե յես, թե նրանք, անդադար դիպչում էյինք թելին և կախված ձողին... Հանկարծ ամպրոպը սաստիկ վորոտաց հենց այն ժամանակ, յերբ իմ ձեռքը յերկաթի մոտ էր և քայծեր էյին ճարճատում. բոլորը ինձանից փախան. կինս ինձանից խընդրում էր, վոր յես ևս հեռանամ, սակայն հետաքրքրությունը պահում էր ինձ էլի յերկու թե յերեք րոպե, մինչև վոր ինձ ասացին, վոր ճաշը սառչում է. էլեքտրական ուժն էլ արդեն զրեթե դադարել էր: Հազիվ մի քանի րոպե նրստած էյի ճաշի սեղանին, հանկարծ դուռը բացեց Ռիխմանի ծառան, հևալով, արտասովելով, վախեցած, յես կարծեցի, թե նրան, ինձ մոտ դալիս, ճամփին ծեծել են, բայց նա հազիվ լսելի ձայնով արտասանեց.— «պրոֆեսորին կայծակը սպանեց»: Տեղ հասնելով հնարավոր արագությամբ, վորքան ուժերս թույլ տվին, տեսա, վոր նա ընկած է անշնչացած: Խեղճ այրին ու նրա մայրը՝ գունատ, ինչպես և ինքը: Առաջին

հարվածը, կախված թելից, հասել է նրա գլխին—
 ճակատի վրա յերևում է մուգ-կարմիր բիծ, իսկ
 ամպրոպային ելեքտրական ուժը նրանից դուրս
 է յեկել վոտներով, հատակի մեջ: Վոտներն ու
 մատները մուգ-կապույտ են, իսկ վոտնամանը
 պատված է, սակայն այրված չէ: Մենք աշխա-
 տեցինք վերականգնել արյան շրջանառությունը,
 վորովհետև նա դեռ չէր սառած, սակայն գլու-
 խը ջարդված էր և ել հույս չկար: Այսպես ու-
 բեմն, նա վողբալի կերպով համոզվեց, վոր ամ-
 պրոպային ելեքտրական ուժը խափանել կարելի
 չէ, սակայն յերկաթե ձողը չպետք է մնա դա-
 տարկ տեղում, ուր կայծակը կարող է խփել
 ուզածին չափ: Ռիխմանը մեռավ գեղեցիկ մա-
 հով, կատարելով իր պարտականությունը: Նրա
 հիշատակը չի մոռացվի յերբեք»: Սյուպես եր գը-
 րում Լոմոնոսովը, խնդրելով կառավարությունը
 թողակ նշանակել Ռիխմանի այրուն և վորբերին:
 Ահա այս պատկերի վրա դուք տեսնում եք Ռիխ-
 մանին այն ժանանակվա պաշտոնական տարա-
 գով ու ճերմակ պարիկով (նկ. 5): Յերկաթե ձո-
 ղից դուրս է վոտները հրային գնդակ, բոռնցքի
 մեծությունը և խփել Ռիխմանի ճիշտ ճակատին:

- Իսկ տեսե՞լ ե վորևե մեկը նրա սպանվելը:
- Այո, հենց այդ ժամանակ յեկել է Ռիխ-
 մանի մոտ մի վարպետ փորագրող, վորպեսզի

միասին նայեն փորձերին ու ապա այդ նկարեն
 տպագրություն համար: Նա կենդանի յե մնացել,
 սակայն ընկել է անզգա, իսկ նրա բաճկոնի վրա
 մնացել են խոշոր, այրված շերտեր:



Նկ. 5. Ելեքտրականության փորձերի ժամանակ կայծա-
 կով սպանված գիտնական Ռիխմանը:

- Ռիխմանի մահից հետո դադարեցին՞ այդ
 տեսակ փորձերը, — հարցրեց մեկը:
- Ամենևին չդադարեցին. ինքը Ֆրանկլինը,

նակ Լոմոնոսովը, շատ աշխատեցին այդ ուղ-
ղությամբ:

— Բայց չե՞ վոր նրանք գիտեյին, վոր ամեն
մի ըոպե կարող են սպանվել:

— Արժե՞ր գոհվել սոսկ հետաքրքրության
համար:

— Ֆրանկլինն ու այլ գիտնականներ անում
էյին այդ վոչ միայն սոսկ հետաքրքրությունից
դրդված: Ֆրանկլինը շատ եր հոգ տանում պե-
տական կարիքների մասին: Իսկ նրա հայրենիքը
— Ամերիկան, խոշոր ծովային առևտուր եր վա-
րում: Շատ նավեր Ամերիկայից ովկյանոսով
գնում էյին Յեվրոպա ու վերադառնում, նրանցից
շատերը վնասվում էյին ու կորչում փոթորկից
ու ալեկոծությունից, յեթե յերկյուղալի յե փո-
թորիկը ցամաքի վրա, ծովի վրա նա տասնա-
պատիկ ավելի վտանգավոր է:

— Այդ ճիշտ է,— հաստատեց մի նախկին
նավաստի,— ծովի վրա ձմեռն էլ ամպրոպ է լի-
նում:

— Այդպիսով լինում էյին զեպքեր, յերբ
կայծակի հարվածից վոչնչանում ու խորտակ-
վում էյին ամբողջ նավեր՝ բազմաթիվ մարդ-
կանցով ու ապրանքներով: Մի անգամ այսպիսի
զեպք է պատահում. կայծակը խփում է ասպ-
րանքի արկղներին, իսկ այդ ասպրանքը— վառող

է լինում: Նա վայրկենապես պայթում է իհարկե,
ու ամբողջ նավը հազար կտոր լինում: Մի ու-
րիշ անգամ, գիշերային ամպրոպի ժամանակ,
կայծակը խփում է բարձր կայմին, նրանով ցած
իջնում ու ամբողջ նավը ճեղքում յերկու մասի,
ասես ընկույզ լիներ: Յերկու կեսն էլ իսկույն
ովկյանոսի հատակն են գնում ու միայն մի
մարդ կարողանում է մի կտոր փայտի վրա պա-
հել իրեն ամբողջ որ, մինչև վոր մի այլ նավից
նկատում են ու փրկում: Իսկ քի՞չ դժբախտու-
թյուն է ստեղծում կայծակը ցամաքի վրա: Մի
քանի յերկրներում հաշվել են, թե վորքան մարդ է
սպանում կայծակը յուրաքանչյուր տարի: Որի-
նակ, Ֆրանսիայում, 50 տարվա ընթացքում շան-
թահարված են մոտ 5 հազար մարդ: Իսկ ինչքան
հրդեհներ են առաջացնում, ինչքան շենք ու տա-
վար փչացնում— չես էլ հաշվի: Ահա թե ին-
չու գիտնականները ուզում էյին իմանալ, հաս-
կանալ կայծակի եյությունը ու իսկական մի-
ջոց գտնել նրա դեմ: Յեվ հիրավի, իզուր չէյին
Ֆրանկլինի աշխատանքները — նա այդ միջոցը
գտավ, նա հնարեց առաջին շանթարգեղը:

Նա սարքեց նրան այսպես: Յուր տան կտու-
րին նա դրեց մի յերկար յերկաթե ձող, սուր
ծայրով դեպի վեր, վարի ծայրը նա տարավ վոչ
թե յուր սենյակը, ինչպես Ռիխմանն եր արել,

այլ ուղղակի գետնի մեջ: Կապեց այդ ձողին հաստ յերկաթե թել ու նրան ձգեց դեպի ջրմուղի ջրհանը (նասոս), վորին և ամրացրեց: Կայծակը շատ անգամ խփում եր շանթարգելին, սակայն Ֆրանկլինի տունը և վոչ մեկ անգամ չվնասվեց: Ֆրանկլինի որինակին հետևեցին և ուրիշները: Սկսեցին կառուցանել շանթարգելներ նավերի, բարձր շինությունների, հասարակական շէնքերի (դպրոց, հիվանդանոց, թատրոն) և այլ հիմնարկությունների վրա:

— Յեւ իսկապես ոգնում եր կայծակից,— հարցրին ունկնդիրներին մի քանիսը:

— Այնպես եր ոգնում, վոր, որինակ, Պարիզում վերջին 60 տարվա ընթացքում վոչ մի մարդ չի սպանված կայծակից, այնինչ նույն Պարիզի մատակա գյուղերում, նույն ժամանակամիջոցում, շանթահար են յեղած մի քանի հարյուր մարդ: Ուրեմն մեծ քաղաքներում այժմ գրեթե բոլորն ել ապահով են շանթահարումից, այնտեղ բնակիչներին պաշտպանում են այդ վտանգից շանթարգելները: Իսկ գյուղում կամ դաշտում—ի՛նչ շանթարգել — այստեղ կայծակը սպանում ե մարդկանց, սպանում ե տավարին:

— Իսկ չի՞ կարելի շանթարգելը շինել ուղղակի յերկաթե թելից, առանց ձողի, վորպեսզի ավելի եժան լինի:

— Չի՞ կարելի, վորովհետև թելը բարակ ե, և ուժեղ կայծակը կարող ե նրան հալեցնել, պետք ե վերցնել յերկաթի կամ պղնձի ձող այնպիսի հաստության, վոր նա դիմանա ամենաուժեղ կայծակին: Սովորաբար վերցնում են պղնձե ձող մի սանտիմետր հաստությամբ և կամ թե՛ յերկու սանտիմետր հաստությամբ. Այդ դեպքում վտանգ չի կարող սպառնալ: Անհրաժեշտ ե նաև, վոր ձողը շատ բարձր լինի կտուրի վրայից:

— Ի՞նչքան բարձր պետք ե լինի ձողը, շանթարգելը կտուրից:

— Պետք ե այնպես անել, վոր շանթարգելի ծայրը (սուր ծայրը) կայծակին ավելի մոտ լինի, քան թե կտուրի ծայրը, իսկ շանթարգելի վարի ծայրը, վոր գետնի մեջ ե, պետք ե ամբողջնել յերկաթե թիթեղի, իսկ թիթեղը սուղել ջրի կամ խոնավ հողի մեջ, այդ դեպքում կայծակ հեշտ ու հարմար կանցնի գետինը յերկաթե ճամբով:

— Ինչո՞ւ կայծակը անպատճառ շանթարգելին կիսիի և վոչ թե նրա կողքով կանցնի: Յեթե կայծակը սոսկ մի կայծ ե, չե՞ վոր նա կարող ե թռչել ուր պատահի. կայծերը թռչում են ուր պատահի և ինչպես պատահի,—մեկը կտուրին, մեկը գետին, մյուսը խոտի դեղին...

— Շատ ուղիղ հարց ե այդ,—նկատեց Սա-

քոն:—Հարցի հենց արմատին կալաք: Ֆրանկլինը յուր փորձերով հենց այդ հարցի պատասխանը գտավ: Պարզվեց, վոր դա այնքան ել խորիմաստ բան չէ, և ով ուզենա մի քիչ մտածել, կարող է շատ լավ հասկանալ: Ելեքտրականության վրա փորձեր կատարողները վաղուց իմացել էյին, վոր ելեքտրականությունը վոչ մի բանի վրա յերկար ժամանակ չի մնում: Կշփես գնդակը կամ ապակյա ձողիկը, իսկ յերկու յերեք րոպեյից անհրաժեշտ է լինում նորից շփել—նախկին ելեքտրականությունն արդեն գնացել է, պարպվել: Ֆրանկլինը նկատեց, վոր գնդակից ելեկտրականությունը այնքան շուտ չի հեռանում, վորքան ձողիկից. իսկ ամենից ավելի արագ հեռանում է նա սուր, սրածայր առարկայից, որին նակ, ապակու սուր ծայրից նա այնքան արագ է հոսում, վոր զգում ես ձեռքով—կարծես քամի յե փչում: Իսկ յեթե ելեքտրականությամբ լեցված սայրին (սուր ծայրին) մոտեցնենք ճրագը, բոցը վոչ միայն թեքվում է, այլ և կարող է ճրագը մարել. իսկ յեթե այդ ելեքտրականությամբ լեցված սրածայր առարկան պահենք մթության մեջ, նրա սայրին կնկատենք կապույտ փայլ...


— Հին, վաղուցվա նավաստիները պատմում էյին ինձ,—խոսեց նախկին նավաստին,—թե փոթորկի ժամանակ յերբեմն կայմերի սայրին վառ-

վում են կապույտ լույսեր, յես նրանց չէյի հավատում. գուցե իսկապես կարող է լինել, և դա ելեքտրականությունի՞ց է:

— Հին նավաստիները քեզ չեն խաբել. բարձր սայրերին փոթորկի ժամանակ լինում են այդպիսի կրակներ: Նավաստիներից շատերը համարում են նրանց աստվածային: Նրանք հավատում են, թե մի սուրբ է, վոր իջնում է յերկնքից նավի վրա ու վառում է ճրագներ: Բայց այդպիսի ճրագներ վառվել են շատ անգամ կռուպաշտական նավերի վրա և նույնիսկ կռուպաշտ ազգիմկների յերկար նիզակների վրա: Դրանց իհարկե վոչ վոք չի կարող սուրբ համարել, մենք ել, իմանալով, թե վորտեղից են այդ կրակները, չենք հավատում այդ դատարկաբանություններին:

Գերմանական Բըյուկկե քաղաքի ծայրամասում 1882 թվի ոգոստոսի 13-ին կրակ յերեաց մի հարդե կտուրի վերևում: Տան բնակիչները վախեցան, կարծելով թե հրդեհ է սկսվում տանիքից: Այդ կրակը սպիտակ գույնի յեր ու չեր շարժվում: Շուտափութ կերպով սանդուխք բերին ու մի բանվոր մի դույլ ջուր վերցնելով բարձրացավ կտուրը՝ հանգցնելու: Բայց նոր եր նա նշան առել, վորպեսզի գույլը պարպի, կրակը իսկույն հանգավ, իսկ բանվորին մի ուժ այնպես

քաշեց ձեռքից, վոր դույլը ընկավ ու շուրը թափ-
վեց բանվորի վրա: Ապա բարձրացան կառուրը



Նկ. 6. Ելեքարական փայլը փոթորկի
ժամանակ, Պարիզի աշտարակներից
մեկի վրա:
ըրտասարգներից մեկը:

զննելու, և կրակի
վոչ մի հետք չգտան
հարդի վրա: Դա
կրակ չներ, այլ ուժեղ
ելեքտրական լույս:
Բարձր գանգատնե-
րի վրա մի քանի
տեղերում այդպիսի
լույս հաճախ է յե-
րևում: Պարիզի բնա-
կիչները յերբեմն
յերբեմն, փոթորկից
առաջ, հաճույքով
նայում են այդպի-
սի փայլին՝ բարձր
աշտարակների վրա:
Դրանցից մեկը դուք
տեսնում եք մեր այս
նկարի վրա (նկ. 6):

— Մարդու վրա
յե՞լ կարող են լի-
նել այդպիսի կրակ-
ներ, — հարցրեց յե-

— Յեղեղ են և մարդկանց վրա: Դեռ շատ
հնում հաճախ նկատել են այդպիսի դեպքեր:
Մի հնամյա ռազմագետ յուր գրքի մեջ պատ-
մում է, թե մի անգամ գիշերով բանակի վրա
հանկարծ յերևացել է թանր ամպ ու զինվորնե-
րի նիզակները սկսել են լույս արձակել: Մի այլ
դեպք պատահել է մի գերմանական քաղաքում,
1769 թվին. բարձր գանգակատան վրա յերևա-
ցել են հրեղեն լեզուներ: Հարևանները կարծել
են, թե հրդեհ է սկսվել ու վազել են հանգցնե-
լու. սակայն յերբ բարձրացել են վերև, հան-
կարծ տեսել են, վոր իրենց գլուխների վերև
նույնպես բոց կա ու լույս:

Յերկու ճանապարհորդող, Պեյեպյե և Գոսար,
թափառում էյին Պիրինյան լեռներում (Իսպա-
նիայում): Մի որ նրանք պատահում են այնպի-
սի ուժեղ փոթորկի, վոր ներքևում մնացած բա-
րեկամները համարում էյին նրանց կորած: Սա-
կայն նրանք թագնվել էյին ժայռի ծածկույթի
տակ իրար յերեսին նայելով: Հանկարծ նկատել
յեն, վոր նրանց մազերը բարձրանում են, ճար-
ձատում ու լույս արձակում: Ձեռները զլխին
բարձրացնելով, նրանք տեսնում են, վոր մատե-
րի ծայրերից փայլ է արձակվում աղմկելով:
Վոչ մի ցավ կամ այրոց նրանք չէյին զգում:
Փոթորկը անցնելուն պես՝ անհետացել են և
այդ կրակները:

Բայց փոթորիկը ամեն անգամ այդպես բարեհաջող չի վերջանում:

Վոչ մի տեղ, նույնիսկ ծովի վրա չեն լինում այնչափ ուժեղ փոթորիկներ, ինչպես լեռներում: Հուշակավոր ճանապարհորդ Սոսյուրը շատ անգամ բարձրացել է ամենաբարձր, հավիտենական ձյունով ծածկված լեռները: 1867 թվի հունիսին նա մի քանի ուղեկիցներով գանվում էր Ալայան լեռներում, ավելի քան յերեք վերստ բարձրության վրա: Վերելքը շատ ծանր էր ու թեք, խոշոր անձրև էր տեղում ու ձյունավազ: Բոլորը հոգնեցան ու բաղեցին: Կեսօրին, ժամը 1-ի մոտ, հասնելով բարձունքներից մեկին, ճամբորդները հենեցին իրենց յերկաթե ցուպերը ժայռին ու հավաքվեցին ճաշելու: Հանկարծ Սոսյուրը զգաց, վոր մի ինչ վոր բան ծակում է նրա մեջքն ու ուսերը: «Վեր թռա տեղիցս, պատմում է նա,— ու դեն գցեցի իմ կտավե շըրջագետտը: Սկզբում կարծում էյի, թե շըջագետտիս մեջ պատահամբ գնդասեղներ են ընկել, սակայն ցավը չեր դադարում: Նա համակեց ամբողջ մեջքս, մեկ ուսից մինչև մյուսը ու յես զգում էյի խողտանք ու ճանկոտոց, ասես պիծակներ էյին խուժել շապկիս մեջ ու կծոտում էյին ինձ: Սկսեցի հանվել, չնայած ցրտին, բայց հանկարծ մենք լսեցինք բարձր բզզոց, կարծես

թե բզեզների ամբողջ բանակ էր թռչում. բարձրացնելով գլուխներս, մենք նկատեցինք վոր աղմուկը գալիս է մեր ցուպերից, վոր հենած էյինք ժայռին. այդ շարունակվեց հինգ րոպե:

Յես իսկույն հասկացա, վոր իմ մեջքի ցավը առաջ է գալիս ելեքտրականությունից, վոր հոսում է գետնից՝ մարմնիս միջով: Սակայն ցերեկվա լույսով մենք չէյինք կարող նկատել մեր ցուպերի վրա վորևէ կրակ կամ փայլ: Յերբ մենք վերցրինք ցուպերը ձեռներս, նրանք սկսեցին ավելի ուժեղ հնչել. մենք շարժում էյինք նրանց, վեր, վայր, ամեն կողմ, սակայն աղմուկը չեր դադարում: Իսկ գետնից վոչ մի ձայն չեր լսվում: Մինչ այդ՝ յերկինքը մթնեց ու ծածկվեց ամպերով: Հանկարծ յես զգացի, վոր իմ գլխի և միքուքի մազերը շարժվում են ու բարձրանում. մեզ հետ յեղած մի յերիտասարդ սկսեց բղավել, թե նրա բեխերի մազիկները բարձրանում են, իսկ ականջներից մի ինչ վոր բան է հոսում: Բարձրացնելով ձեռքս, յես նկատեցի, վոր մատներիցս ելեքտրական ուժեղ հոսանք էր ծորում: Մի խոսքով, ուժեղ ելեքտրական հոսանք է ծորում ցուպերից, հագուստներից, ականջներից, մազերից ու մարմնի մյուս մասերից: Բայց ահա հեռվում լսվեց վորոտը, մենք շտապ թողինք լեռան բարձունքը ու վազեցինք յերկու հարյուր քայլ դեպի ցած»:

— Ուրեմն այդ լեռը, ասես, մի մեծ շանթարգե՞լ եր,—հարցրեց տղաներից մեկը:


— Դու յեւ ասիր, ելի,—վրա բերին մյուսները.— ելեքտրականութիւնը լեռից եր ծորում, իսկ միթե կայծակը շանթարգելից ամպը՞ն ե խփում: Դու առաջ մտածիր ու ապա խոսիր:

— Բայց չե՞ վոր սայրից ելեքտրականութիւնը ծորում ե այնպես, վոր վերեից կարելի յե նրան հանգցնել: Ճիշտ ե, շանթարգելից ել ե անցնում յերկրային ելեքտականութիւնը: Միթե շանթարգելը չի՞ կարող լույս արձակել ուժեղ փոթորկի ժամանակ: Դու լավ ե ինքդ մտածես, թե ինչ ես ասում:

— Սաքոն, սպասելով վիճողների լռելուն, շարունակեց.

— Շատ անգամ տեսել են կրակներ շանթարգելների վրա, և դա հասկանալի յե. չե՞ վոր փոթորկի ժամանակ միշտ գործում են յերկու ելեքտրականութիւն, —մեկը կուտակվել եամպերում—դա դրական ելեքտրականութիւն ե, իսկ մյուսը՝ գետնի մեջ—բացասական: Նրանք ձրգվում են, ձգտում մեկը մյուսին, ասես վորոնում են մի այնպիսի տեղ, վորով կարողանան անցնել ողի միջով. հենց այդ պատճառով ել կայծակը խփում ե շանթարգելին ու չի անցնում նրա կողքով:

— Ահա՛ նկարի վրա դուք տեսնում եք (նկ. 7-րդ) ամպի ծառեր: Ամպի վրա կա դրական ելեքտրականութիւն խոշոր պաշար. նկարի վրա



նկ. 7.

նա նշանակված ե խաչիկներով: Գետնի վրա ևս կա ելեքտրականութիւն խոշոր պաշար, բայց բացասական ելեքտրականութիւն. նկարի վրա

նա՝ նշանակված է գծերով. սակայն գետնի ու ամպի միջև կա ողբ, իսկ չոր ողբ ելեքարականությունն չի անցկացնում: Այ, յեթե յերկաթե ձող ձգեյինք դեպի ամպը, ելեքարականության պարզվելը կհեշտանար:



Նկ. 8. Ելեքարականությունը ամպերում ու գետնի վրա:

— Բայց չե՞ վոր առանց յերկաթե ձողի յեկայծակը խփում է գետնին, ուրեմն ի՞նչպես է

անցնում նա ողից՝ յեթե ողբ ելեքարականությունն չի անցկացնում, — հարցրեց մեկը տարակուսանքով:

— Բանը նրանումն է, վոր ողբ յերբեք չի լինում բոլորովին չոր: Նրա մեջ միշտ կա գոլորչի, մանավանդ փոթորկից առաջ: Ահա այդ թաց ողով անցնում է կայծը կամ կայծակը: Հենց այդ պատճառով նա շատ սակավ լինում է ուղղածիզ, իսկ սովորաբար — կտարտված, ճանկածն (սես նկ. 8-րդ):




Նկ. 9. Ելեքարական կայծի լուսանկարը:

Այժմ մարդիկ սովորել են նույնիսկ լուսանկարել կայծակը: Ահա մի այդպիսի լուսանկար. նրա վրա պարզ յերևում է, ինչպես կայծակը չի վազում ուղիղ ճանապարհով, այլ ծռվում է, ասես ավելի հարմար ուղի վորոնելով իր համար. նա անցնում է այն տեղերով, ուր ավելի

թացություն, նամություն կա, ուր ավելի հեշտ
է անցնելը:

— Այ, յեթե ելեքտրական կայծն ել, ավելի
խոշորը լուսանկարեյին, այն ժամանակ կարելի
կլիներ համեմատել կայծակի հետ, ավելի պարզ
կլիներ, արդոք միատեսակ են նրանք, թե՞ վոչ:

— Գիտնականները հենց այդպես ել արել
են: Ահա յես ձեզ ցույց եմ տալիս ելեքտրական
կայծի լուսանկարը (նկ. 9). ասացեք, միթե նա



Նկ. 10. Կայծակի լուսանկարը:

նման չե՞ կայծակի լուսանկարին (նկ. 10-րդ):
Յերբեվում է այստեղ ել, վոր ելեքտրական կայ-
ծը չի գնում ուղիղ գծով, այլ ուղի յե ստեղ-

ծում խոչընդոտի միջով: Ասես մարդը խիտ ան-
տառում— փորձում է անցնել ձախ ու աջ, յեր-
բեմե յետ ել է դառնում, մինչև վոր գտնի անհրա-
ժեշտ ուղին:

Կայծի լուսանկարը ուշադրությամբ գննեցին:
Ունկնդիրներէից մի քանիսը վարանումով ու կաս-
կածանքով շարժեցին գլուխները. վերջապես մի
միրուքավոր սկսեց.

— Ահա թե ինչ չեմ կարողանում հասկանալ.
կայծակը ամպից գետին է ընկնում մի ակըն-
թարթում, աչքդ մի անգամ բաց ու խուփ ես
անում,—նա արդեն թռավ. ապա ի՞նչպես այդ-
քան կարճ ժամանակի ընթացքում նա կարող է
ճամբա վորոնել, յետ ու առաջ շարժվել. կար-
ծում եմ, նա վերստի չափ պետք է թռչի,
գուցե և ավելի:

— Քեռի Գեվոն ճիշտ է ասում, դու մի նա-
յիր, վոր նա արող է քաշում,—լսվեց նստա-
րաններէից,—հարբած է, բայց խելոք,—արձա-
գանքեցին յետին շարքերէից:

— Կամաց, կամաց... Քեռի Գեվոն ել ճիշտ է
ասում, գիտնականներն ել ճիշտ են ասում: Կայ-
ծակի ճամբան շատ մեծ է: Յերբեմն նա վոչ մի-
այն մեկ վերստ է անցնում, այլ 10 ու 15 վերստ.
մարդիկ չափել են նրա ճամբան: Մի գիտնական,
Գիլըն ազգանունով, դիտում եր փոթորիկը 1866

թ. հունիսի 27-ին: Մի հարված միայն տեղի ունեցավ կայծակից անմիջապես հետո: Նրան թվում էր թե կայծակը խփեց շատ մոտ, իրա կողքին, սակայն այդ հարվածից սպանվեցին յերկու անցորդ, վոր կանգնած էյին ծառի տակ այդտեղից 5 վերստ հեռու:

Կայծակը այնքան արագ է շարժվում, վոր թվում է թե նա միանգամից յերկնքի կեսն է գոտևորում, ու այդչափ կարճ ժամանակամիջոցում նա կարողանում է անցնել մի քանի վերստ: Այդ հանգամանքը առաջին հայացքից միայն կարող է տարրիմակ թվալ: Դուք ինքներդ շատ լավ գիտեք, թե վորքան արագ է գնում ելեքտրականությունը: Հեռախոսով կարելի յե խոսել վոչ միայն հարևան կայարանի, այլ և նահանգային քաղաքի, Մոսկվայի հետ ու հենց վոր խփի հեռագրատան ծառայողը յուր գործիքի վրա, իսկույն նրան պատասխանում է Մոսկվան, այն ինչ հոսանքը պետք է անցնե տասնյակ ու հարյուրավոր վերստեր: Ելեքտրականությունը հարյուրավոր ու հազարավոր վերստերից անցնում է վայրկենաբար, ել չխոսած ինչ վոր տասը կամ տասնըհինգ վերստի մասին: Սրանք բոլորը դատարկ խոսքեր չեն—այդ բոլորը հաշվել ու ստուգել են գիտնականները: Հազարավոր մարդիկ ամեն որ հեռագրատանը ոգտվում են

ելեքտրականությամբ և նրանցից ամեն մեկը կարող է ինքը ստուգել:

— Իսկ ճի՞շտ է, վոր կայծակը յերբեմն կծիկի պես գլորվում է մարդու վոտքերի տակ ու շարժվում կամաց-կամաց, թռչում է բզեզի նման:

— Լինում է այդպիսի կայծակ, բայց շատ սակավ: Մի իտալացի գիտնական (Սպալանցանի) պատմում է այն դեպքի մասին, վոր տեղի յե ունեցել Պավիա քաղաքի մոտ 1871 թվի ոգոստոսի 29-ին: Փոթորկի ժամանակ մի շահել գեղջկուհի արտում է յեղել. հանկարծ նրա վոտքերի առաջ յերևում է կրակի գունդ, յերկու բոռնցքի մեծությամբ. նա մնում է շմած, իսկ գունդը գլորվում է նրա բոբիկ վոտքերին, բարձրանում է նրա վոտներով, շորի տակով, կըրծքի վրա դուրս գալիս ու աղմկելով բարձրանում ողի մեջ: Յերբ գունդը բարձրանում էր վոտներով, աղջիկը վախից ընկնում է. յերկու մարդ վագում են նրան ոգնության, սակայն տեսնում են, վոր կայծակը աղջկանը մի առանձին վաաս չի պատճառել: Կարճ ժամանակից հետո նրան գննում է բժիշկը, վոր նկատում է աննշան ճանկոտվածք աջ ծնկից մինչև կրծքի մեջտեղը. շապիկը մարմնի այդ մասում ամբողջովին կտրտված էր:

— Ոհ, աստված իմ, և վո՞ղջ ե մնացել. այ թե հրաշք. եղալիսի սարսափ,— ու միայն ճանկուտվածք և փչացած շապիկ:

— Թե վոր ինձ հետ պատահեր այդ, յես վախից կգժվեյի,— ծիծաղեց ունկնդիրներէց մեկը:

— Սյդալիսի գնդաձև կայծակի ուրիշ դեպքեր ել են յեղել, ինչպես պատմում են բազմաթիվ ականատեսները: 1845 թվին ուժեղ փոթորկի ժամանակ կայծակը խփում ե Ֆրանսական գյուղի տներէց մեկին. Հարվածի ժամանակ ծխնելույզից իջնում ե մեծ կրակե գունդ ու դուրս ե գլորվում վառարանից: Վառարանի մոտ այդ րոպեյին կանգնած են լինում յերեք կին ու մի յերեխա, սակայն գունդը նրանց չի կպչում. նա գլորվում ե խոհանոցի միջով, ուր կանգնած եր մի յերիտասարդ, անցնում ե նրա կողքից ու գնում դեպի հարեան սենյակը: Սարսափահար կանայք սկսում են կանչել յերիտասարդին, վորպեսզի վտարով տրորե գունդը, բայց նա այդ չի անում (նկ. 11-րդ). առիթ ունենալով լինել քաղաքում ու նայել ելեքտրականության փորձերին, նա բնականաբար վախենում ե դիպչել գունդին: Մինչ այդ՝ գունդը գլորվում ե բակը ու կորչում: Մի քիչ հետո փակ գոմում գտնում են սպանված խոզին՝ մի քիչ խանձված:

— Իրա բախտն ե, վոր եդ հիմար կանանց ականջ չի դրել:

— Իհարկե, թե չե՛ մենակ վոսկորները կմնային:



նկ. 11.

— Տեղնուտեղը կայրվեր:
— Ի գուր չե, վոր սովորել ե մարդը. գիտության շնորհիվ կենդանի յե մնացել:

— Մի այլ գյուղում փոթորկի ժամանակ նկատել են կրակե գունդ ձվի մեծությամբ. նա ընկած եր անկողնի վրա ու վառվում եր. Սկըսում են ջրով հանգցնել, շորով կածկել, բայց վռչինչ չի ոգնում. կրակը սկսում ե ծավալվել ու շուտով վառվում ե ամբողջ տունը:

— Այ, պառապները ասում են, թե լավ ե փոթորկի ժամանակ զանգահարելը. այդ հեռացնում ե փոթորիկը. ինչի՞ցն ե դա:

— Դատարկ բան ե, զանգահարությունը յերբեք չի կարող փոթորկին խափանել: Այդ հնարել են սգետ մարդիկ. նրանք հավատում են, վոր փոթորկի ժամանակ Յեղիա մարգարեն ման ե գալիս յերկնքով: Այդ տեսակ հիմար հեքիաթներից միայն վսաս ե առաջանում: Մի գերմանացի գիտնական հաշվել ե, վոր 33 տարվա ընթացքում կայծակը խփել ե 386 զանգատան, սպանված են 120 ժամկոչ և վիրավորված՝ 200-ից ավելի: Այդ—միայն Գերմանիայում. իսկ վո՛րքան այդպիսի դեպքեր են յեղել այլ յերկրներում—վոչ վոք չի հաշվել: Բայց անշուշտ—վոչ պակաս: Այսպես, Ֆրանսիայում մի գիշերվա ընթացքում, 1817 թվի ապրիլի 14—15-ին, միայն մի շրջանում կայծակը խփել ե 34 զանգատան: Սակայն ժամկոչները համառ մարդիկ են, դրանից հետո յել նրանք խելքի չեն յեկել ու

հենց վոր փոթորիկը սկսվում ե, սկսում են զանգահարել:

Ամենամեծ դժբախտությունները կայծակից յեղել են յեկեղեցիներում: Հիշենք լավ հայտնի դեպքերից մի քանիսը: 1717 թվի հուլիսի յերկուսին կայծակը խփեց գերմանական Յիտաու քաղաքի մոտ յեկեղեցուն և սպանեց 48 մարդ: 1873 թվի հունիսի 26-ին կայծակը խփեց մի այլ յեկեղեցու, այս անգամ արդեն Ֆրանսիայում, ու տեղն ու տեղը պառկեցրեց 60 աղոթող: Իսկ 1867 թվին անա ինչ պատահեց Ֆրանսական մի այլ քաղաքում: Կիրակի յեր ու յեկեղեցում մեծ բազմություն կար. հանկարծ լսվեց կայծակի սոսկալի հարված և ապա տիրեց մեռելային լուռություն: Յեկեղեցում բարձրացած ծուխն ու փոշու ամպերից վոչ վոք վռչինչ չեր կարող նըշմարել: Յերբ ծուխը ցրվեց, տեսան, վոր 30 հոգի ընկած են. յերբ վերցրին յերեցփոխին, նրա աչքերը բաց եյին, բայց առանց փայլի, կյանքի նշույլ չկար նրա մեջ. ամբողջ հագուստը այրված եր, վոտնամանները՝ արյունոտ ու պատաված եր, վոտնամանները՝ ընկած եր գետնին ու ռոտած: Մասնատուփը ընկած եր յերկար վորոնեցին ու ծովումված. մասունքը չկար. յերկար վորոնեցին ու իհարկե, վոչինչ չգտան, այրվել եր: Զանգատունը ճաքած եր, ու նրա մեկ անկյունը՝ փրկած:

կայծակը, խփելով մարդուն, գրեթե միշտ պոկում է նրանից վրանամանները: Մի ֆրանսիական պաշտոնիայի փոթորիկը վրա հասավ փողոցում. յերբ փայլեց կայծակը, նա մեծ թուլություն զգաց վրաններում ու ընկավ ծնկների վրա, հետո վեր կացավ ու սկսեց դողալ, ասես ջերմի մեջ: Առանց յերկար մտածելու, նա քայլերը ուղղեց դեպի մոտակա պինետունը, վորպեսզի խմի մի բան՝ հանգստանալու համար: Յերբ նա զննեց իրան, տեսավ, վոր նրա նոր կոշիկների բոլոր մեխերը պոկված են ու կոշիկը մի քանի տեղից ճաքած: Նա շատ ուրախ եր, վոր եժան է պրծել:

Պատահում է յերբեմն, վոր շանթահարված մարդը մնում է, ասես, կենդանի, նույն դրության մեջ: Մի յերեկո Տրուա քաղաքի հողևոր դպրոցի վարիչը տուն եր վերադառնում ձի հեծած: Ճանապարհին վրա հասավ փոթորիկը: Նրա յետևից գնում եր մի վանական, վերջինս նկատեց, վոր յուր ուղեկիցը յերերվում է թամբի վրա ու կարծեց, թե քնել է: Մոտեցան տանը. վանականը սկսեց արթնացնել յուր ուղեկցին ու սարսափեց՝ նա մեռած եր: Հանգուցյալը յերկու վերստ անցել եր ձի հեծած:

Իսկ Անգլիայում ահա թե ինչ պատահեց 691 թվի հուլիսի 27-ին: Յերբ սկսվեց փոթո-

րիկը, գյուղացիք աշխատում էին դաշտում: Հնձվորներից մի քանիսը ապաստանեցին կաղնու տակ ու վորոշեցին ճաշել: Վորոտը լավում եր հեռվում, հանկարծ կայծակը խփեց ուղիղ նրանց: Այդ հարվածից բոլորը սպանվեցին ու մնացին անշարժ: Անցավ մի-յերկու ժամ: Անցորդները հետաքրքրվեցին կաղնու տակ ապաստանած այդ անշարժ խմբակով ու մոտեցան նրան և տեսան մի խումբ մարդիկ, վոր ասես քարացել էին, ճաշելիս. մեկը բաժակ է բռնած ձեռքում, մյուսը հացն է տանում դեպի բերանը, յերբորդը մեկնել է ձեռքը կարտոֆիլին: Բոլորի աչքերը բաց էին ու յերկու քայլ տարածության վրա նրանք միանգամայն կենդանի մարդկանց տպավորություն էին թողնում: Միայն մի քանիսի կաշին քիչ սևացած եր, ասես մրոտված: Մի նկարիչ տեղն ու տեղը նկարեց այդ դժբախտ մարդկանց. ահա այդ նկարը (*նկար 12-րդ*):


— Չպետք է կաղնու տակ պահվելին:

— Ինչու չպահվելին վոր, վորոտը հեռուն եր դրդում:

— Փոթորկի ժամանակ միշտ ավելի վտանգավոր է ծառերի տակ պահվելը. կայծակը ավելի շուտ ծառին կխփե, քան թե դատարկ տեղին:

— Ե՛, հիմա յես վոչ մի դեպքում փոթորկի

ժամանակ ծառի տակ չեմ պահվի, — լավեց ամեն կողմից:



Նկ. 12.

— Եւ ուրիշ շատ զարմանալի ու տարօրինակ բաներ եւ անում կայծակը. բոլորը չես պատմի:

Յերբեմն կայծակը կտրում ե մարդուս յերկու մասի, ասես կացինով, յերբեմն բոլորովին մերկացնում, առանց, սակայն, մի փոքրիկ չանկովածք անգամ թողնելու նրա մարմնի վրա: Մի մարդ փոթորկի ժամանակ խմում եր. կայծակը խլեց նրա ձեռքից բաժակը ու, առանց վորևե մնաս հասցնելու, տարավ մի այլ բակ: Մի բանվոր յերկաթե յեղան եր տանում ուսին, կայծակը բարձրացրեց նրան, 25 սաժենով դեն գրցեց ու ծումոնեց խցանահանի ձևով: Յերկու կին մանում եյին պատուհանի առաջ. կայծակը կորդեց նրանց միլերը:

Մի դեպք ել ե պատահել, վոր արժե պատմել: Նա տեղի յե ունեցել Ավստրիայում, Վիեննա քաղաքի շրջակայքում, 1865 թվին:

Մի բժիշկ յերկաթուղով տուն եր վերադառնում: Գնացքից իջնելիս, նա ձեռքը տարավ դեպի գրպանը ու չգտավ այնտեղ յուր փողամանը. շատ ափսոսաց, վորովհետև հիշատակ եր ու զարդարված յուր ազգանունի սկզբնական յերկու վոսկե տառերով: Հենց վոր բժիշկը տուն վերադարձավ, յեկավ վոստիկանը ու կանչեց նրան մի մարդու մոտ, վորին ծառի տակ խփել եր կայծակը: Բժիշկը սկսեց գննել հիվանդին ու հանկարծ նկատեց նրա ազդրի վրա զբոստված հենց այն յերկու տառերը, վոր կային նրա կու-

լած փողամանի վրա: Նա հիվանդին ուշքի բերեց
և ուղարկեց հիվանդանոց, ինքն ել գնաց յե-
տևից ու հայտնեց, վոր յերևի նրա մոտ ե իր
փողամանը. խուզարկեցին ու իսկապես, զբալա-
նումը գտան բժշկի փողամանը, բայց նրա վրա-
յի տառերը հալված էյին: Վոստիկանությունը
քննություն կատարեց ու պարզվեց, վոր այդ
հիվանդը գող ե յեղել: Գործը քննվեց դատարա-
նում ու այդ մասին շատ գրեցին Վեննայի բո-
լոր թերթերում:

Յերբ մարդիկ իմացան կայծակի եյությու-
նը, նրանք հասկացան, թե ինչից ե առաջանում
վորոտը: Ելեկտրական կայծը միշտ աղմուկով ու
ճայթյունով ե թուշում: Այն փոքրիկ ելեկտրա-
կան կայծերը, վոր սովորեց մարդը առաջացնել,
բավականաչափ ուժեղ են ճայթում, իսկ յեր-
կարությամբ մի քանի վերստ հսկայական կայ-
ծը պետք ե, անշուշտ, ուժգին վորոտա:

— Իսկ ի՞նչու վորոտը յերկար ե վորոտում
գրդրյունով:

— Դա նրանից, վոր նա միանգամից չի հաս-
նում մեղ: Այ, յեթե հեռվում տեսնում ես շո-
գեկառք, ու նա սկսի սուլել, մենք նախ գոլոր-
շին կտեսնենք ու ապա սուլոցը կլսենք, ու վոր-
քան ավելի հեռու լինի շոգեկառքը, այնքան
ավելի կուշանա սուլոցը: Ինչից ե դա. նրանից,

վոր յուրաքանչյուր հնչյուն մեղ հասնելու հա-
մար վորոշ ժամանակ ե պահանջում. իսկ թուշում
ե նա վոչ այնքան արագ, — ավելի դանդաղ, քան
լույսը. մի վայրկյանի ընթացքում նա անցնում
ե միայն յերեք հարյուր մետր*): Յերբ փայլում
ե կայծակը, մենք նրան իսկույն տեսնում ենք,
իսկ նրանից առաջացած ճայթումը, այսինքն՝
վորոտը իսկույն մի անգամից ամբողջովին չի
լսվում — սկզբում մենք կլսենք կայծակի մոտ
մասի վորոտը, ապա ավելի հեռվի. յերբեմն կայ-
ծակը այնքան հեռու յե փայլում, վոր վորոտը
բոլորովին չի լսվում:

Յուր ուժով ել վորոտը տարբեր ե լինում:
Յերբեմն այնպես ե ճայթում, ասես կտոր են
ճղում, յերբեմն ել ասես յերկաթե ձողերով բար-
ցած սայլ ե անցնում սալահատակով. յերբեմն
միայն մի հարված ե լսվում, ասես հրացան ար-
ձակեցին, իսկ յերբեմն ել այնպիսի հարվածներ
են լսվում, ասես հարյուրավոր թնդանոթներ են
դրդում:

— Թնդանոթները ամեն մի վորոտից գերա-
զանց են — վիրավորները թիկունքում, ճակատից
հարյուր վերստ հեռավորության վրա, լսում
եյին, — նկատեց ինվալիդը:

*) Յերկու մետրը հավասար ե մոտ մեկ սաժինի.

— Այդ մեկը ճիշտ է, — համաձայնեց Սաքոն,
 — այժմյան թնդանոթները վորոտից շատ ավելի
 գերազանց են: Մեծ թնդանոթների գրգռոցը
 պարզ, խաղաղ յեղանակին 200 ու 250 վերատից
 է լավում, իսկ վորոտը շատ սակավ՝ 20 վերա-
 տից: Մարդկանցն էլ թնդանոթը անհամեմատ
 ավելի յե խփում, փչացնում, հաշմանդամ դարձ-
 նում, քան տասնյակ կայծակներ: Այդ գործում
 մարդը գերազանցել է բնությանը ավելի քան
 տասն անգամ:

— Ավելի լավ էր, մի այլ բանում նա նրան
 գերազանցեր, վորպեսզի հողից ավելի՛ հաց հա-
 վաքենք, ու վորպեսզի ապրանք ավելի՛ լինի ու
 գները՝ եժան:

— Դրա ճանապարհն էլ ելեկտրականութունն
 է. Բայց այսօր մեր զրույցը այնքան յերկարեց,
 վոր այլևս պատմել անհնարին է. Յեկեք՝ կիրա-
 կի հավաքվենք ու զրուցենք ելեկտրոֆիկացիայի
 մասին:

— Իսկ դա ի՞նչ բան է, — հարցրեց տղանե-
 ռից մեկը:

— Միթե չգիտե՞ս, — աղմկեցին ամեն կող-
 մից, — պատմել են մեզ, եդ են մասին է, վոր
 ամբողջ գյուղը լուսավորում են ելեկտրականու-
 թյամբ:

— Ա՛յ, եդ լավ բան է: Անպատճառ բոլորս

կհավաքվենք: Մենք պետք է մտածենք և մեր սե-
 փական ելեկտրոֆիկացիայի մասին: Մինչև յե՞րբ
 մթության մեջ պետք է ապրենք:

Սրանով վերջացավ զրույցը:

ՉՐՈՒՅՑ ԵԼԵԿՏՐՈՖԻԿԱՅԻՆ ՄԱՍԻՆ

Հետևյալ կիրակի ավելի շատ ժողովուրդ հա-
 վաքվեց: Յերևում էր, վոր ելեկտրոֆիկացիան
 բոլորի հետաքրքրութունն էր գրգռել — յեկել էյին
 վոմանք նաև հարևան գյուղերից: Կային այստեղ
 և փորձված մարդիկ, մեկը Գերմանիայում, մյու-
 սը Ավստրիայում յեղել էյին գերության մեջ:
 Բավականաչափ նոր բաներ էյին տեսել: Սաքոն
 սկսեց զրույցը այսպես.

— Մարդիկ վաղուց նկատել էյին ելեկտրա-
 կան կայծի — կայծակի մեծ ուժը: Սակայն նրանց
 չհաջողվեց միանգամից թամբել այդ ծեր ճիւղն —
 ելեկտրականությանը: Ասենք գեռ այժմ էլ նա
 բոլորովին չի ընտելացած, սակայն յենթարկվում
 է մարդուն: Ամենից առաջ՝ վո՞րտեղից ճարել
 ելեկտրական ուժի աղբյուրը. կայծակից նրան
 չես վերցնի, ամպերից չես իջեցնի — պետք է վո-
 ըոնել մի այլ տեղ: Դժվարությամբ, շոշափելով,
 գիտնականները իմացան, թե ինչպես կարելի յե
 ստանալ ելեկտրականութուն...

— Միթե չփումից չի՞ կարելի ստանալ մեծ

քանակով ելեկտրականություն, — հարցրեց նախկին, ուշիմ ունկնդիրներէց մեկը:

— Յեթե հաշոգվեր ել շփումից ստանալ մեծ քանակով ելեկտրականություն, նրա ոգուտը շատ փոքր կլիներ: Այդ ելեկտրականությամբ աշխատել շատ անհարմար ե: Միւնույն ե թե ծովի ջուրը — նա շատ ե, բայց նրանով ջրադացը չես շարժի, — նրա մեջ չկա հոսանք, շարժում: Նույնը ե ելեկտրականությունը: Մշտական աշխատանքի համար հարկավոր ե այնպիսի ելեկտրականություն, վորը, գետի ջրի պես, ամբողջ ժամանակը հոսի, վորպեսզի լինի, ինչպես ասում են գիտնականները, եղեֆրակաւն հոսանք. այդպիսի ելեկտրականությունը կարելի յե գործածել ամեն տեսակ աշխատանքի համար: Բայց վորտեղից առնել նրան:

— Իմ յեղբայրը Վոլխովստրոյումն ե աշխատում. յերբ նա յեկել եր այստեղ, պատմում եր վոր այնտեղ ջրից այնքան ելեկտրականություն են վերցնում, վոր ամբողջ Լենինգրադը իր վողջ նահանգով շուտով կիսայլի կրակներով, վոր Վոլխով գետի ելեկտրականությունը Լենինգրադի գործարանների ու զավոդների բոլոր մեքենաները կշարժի ու բոլոր տները, առանց վառելափայտի, կտաքացնի: Ահա ինչքան ելեկտրականություն կա Վոլխով գետում:

— Վոլխովստրոյը — հսկայական գործ ե, վոր հղացել ե ընկեր Լենինը: Յերբ այդ գործը վերջանա, ամբողջ Լենինգրադը կցնցվի, ասես կենդանի ջրով վողջված:


Սակայն սխալ ե այն կարծիքը, թե ելեկտրականությունը պահված ե Վոլխով գետում: Գետում ելեկտրականություն չկա, բայց կա ջրի ուժը, ջրի ճնշող թափը:

Վոլխովստրոյում շինում են հսկայական ամբարտակ, վորը կապելու յե Վոլխովի ջրերը, բարձրացնելու նրանց ու բարձրությունից իրենց ամբողջ ծանրությամբ նրանք վայր են թափվելու գլխիվայր ու շարժելու հսկայական անիվները — ջրի թոփերը (տուրբինա): Այդ ջրանիվները այնքան արագ են շարժվելու, վոր մի բոպեյի մեջ հազար շրջան են անելու: Յեթե այդպիսի անիվը ամբաջնեյինք սայլին — նա Լենինգրադից Մոսկվա կհասներ մեկ ու կես ժամից, իսկ այդ քաղաքների միջի տարածությունը 600 վերստ ե: Զրադացի անիվն ել վորքրիկ տուրբին ե, բայց ջրադացը Վոլխովստրոյի առաջ նույնն ե, ինչ վոր մոծակը՝ փղի:

Վորքան ել արագ շարժվին ջրանիվները, նրանց մեջ դեռ վոչ մի կաթիլ ելեկտրականություն չի լինի: Յելեկտրականությունը այն ժամանակ միայն կստեղծվի, յերբ ջրանիվի առանց-

քին ամրացնենք դիմամո մեխենաւ: Հենց նրանում ե առաջ գալիս ելեկտրական հոսանքը: Ի՞նչպէս ե շինված այդ մեքենան ու վո՞րտեղից ե նրա մեջ ելեկտրականութիւնն առաջանում: Այդ բոլորը լրիվ բացատրելու համար, մենք պետք ե ելի մի քանի անգամ հավաքվենք ու մի քանի փորձեր կատարենք: Այժմ յես կասեմ ձեզ միայն այսքանը. դիմամո-մեքենայի մեջ կա մի հատուկ ողակ, թելով շրջապատված. այդ ողակը արագ-արագ պտտվում ե: Իհարկե, դրանից դեռ փոշ մի ելեկտրականութիւնն չի ստացվում: Հարցի եյութիւնը նրանումն ե, թե վորտեղ ե շարժվում, պտտվում դիմամո-մեքենայի ողակը: Վորպէսզի ստացվի ելեկտրական հոսանք, անհրաժեշտ ե, վոր ողակը պտտվի պայտածե ծռած մեծ մագնիսի յերկու ծայրերի միջեւ. ահա հենց այստեղ ծնվում ե ելեկտրականութիւնը: Ով վոր ուզում ե իմանալ, թե ինչպէս ե լինում դա ու ինչից՝ պետք ե գրքեր կարդա, սովորի. մի անգամից ամեն բան չես հասկանա: Իսկ առայժմ նայեցեք պատկերներին ու տեսեք, թե ինչպիսի դիմամո-մեքենաներ են լինում: Առաջին պատկերի վրա (նկար 13-րդ) նկարված ե փոքր դիմամո-մեքենա: Նա ամրացրած ե առանցքի վրա. նրա ողակը պտտեցնում ե փոկը, վոր գալիս ե շոգեմեքենայից: Այնտեղ, ուր փոկն


ե, նկարի վրանշանակված ե «1»: Թելով պատատված ողակը չի յերևում, նրան ծածկում ե հաստ մագնիսը, վոր նշանակված ե «2»-ով: Մեքենայի վրա յերևում են այլևս մի շարք լրացուցիչ մա-



Նկ. 13. Դիմամո-մեքենա.

սեր ու թելերը, վորոնցով անցնում ե ելեկտրական հոսարքը: Այդ թելերը նշանակված են «3»-ով: Այսպիսի դիմամո-մեքենան կարող ե շատ տնկերի լույս ապալ, շարժել կալսիչը, շրաղացը և այլն: Մյուս պատկերի վրա (նկար 14) մենք տես-

նում ենք ավելի բարդ մեքենա: Այսպիսի մեքե-
նաներ լինում են խոշոր քաղաքների ելեկտրա-
կան կայարաններում: Նրանք վոչ միայն լեց-
նում են լույսով ամբողջ քաղաքը, այլև քաշում



Նկ. 14. Մեծ ուժով գինամո-մեքենա՝ քաղաքային
ելեկտրակայանի:

արամվայ ու ջուրը լեցնում ջրմուղը: Նրանք են
շարժում և հազարավոր մեքենաները գործարան-
ներում. չես ել հաշվի, թե ինչեր են անում

նրանք: Յերբ նայում ես այդպիսի մեքենային
աշխատելիս, հասկանում ես, թե վորքան աշխա-
տանք ու վորքան խելք ե տրված նրան:

— Ճիշտ վոր աշխատել են մարդիկ. խելք ե
պետք՝ այդպիսի մի մեքենա կառուցելու հա-
մար,—ասացին ունկնդիրները:—Իսկ ի՞նչպես ե
պտտվում նա:

— Այստեղ արդեն փոկով չեն պտտեցնի:
Նա շատ ամուր նստած ե ջրանիվների հաստ
առանցքին. անիվները պտտվում են ու նրան են
պտտեցնում իրենց հետ: Նկարի վրա այդ առանց-
քը չի յերևում: Մագնիսները, վորոնց միջով
պտտվում ե այս մեքենայի ողակը, յերևում են,
նրանք շատ են. նկարի վրա յոթ հատ են յե-
րևում. նրանք արտաքին ծածկույթի տակ՝ ճա-
խարակի նման նստած են իրար յետևից:

Այնպիսի մեծ կայարանում, վորպիսին ե վոլ-
խովստորոյը, լինելու յե վոչ թե մի դինամո-մե-
քենա, այլ նրանցից մի ամբողջ շարք:

— Յես տեսել եմ պատկերի վրա այն կա-
յարանը, վոր ամերիկացիք շինել են հսկայական
ջրվեժի մոտ ու այնտեղից ելեկտրական ուժ են
ուղարկում տասնյակ վերստեր շրջակայքում:
Վոլխովստորոյը այդ ամերիկական կայարանից
ավելի մեծ պիտի լինի,—հարցրեց ունկնդիր-
ներից մեկը:

— Վո՛չ, բայց նա լինելու յե ավելի մեծ, քան Յեզրոպայում յեղած բոլոր ելեկտրակայարանները: Վո՛չ Ֆրանսիայում, վո՛չ Գերմանիայում և վո՛չ Անգլիայում առայժմ չկան այդչափ մեծ ելեկտրական կայարաններ:

Կառուցել այդպիսի կայարան, միևնույն ե թե—նվերել պետութեանը մի միլիոն յերկու հարյուր հազար ամենաընտիր բանվորներ: Միայն թե բանվորներին պետք ե պահել ու կերակրել, իսկ Վոլխովստրոյը, յերբ պատրաստ լինի, մեծ ծախսեր չի պահանջի ու կմնա հարյուր տարիներով, գուցե և հազար:

— Արդյոք Վոլխովստրոյից կլինի՞ վորևե ոգուտ գյուղի համար:

— Ի հարկե, կլինի: Նախ և առաջ՝ Վոլխովստրոյի շրջանի բոլոր գյուղերը կստանան ելեկտրականութիւն, և այն ել ամենաեժան ելեկտրականութիւն. լույս կփայլի վոչ միայն խրճիթներում, այլև ամեն տեղ ելեկտրական խոփերը գործի կանցնեն, ջրաղացները կշարժվեն, կալսիչները, ջրհանները: Գյուղացիները անպայման կընդունեն այդ ամենը, վորովհետև ձեռնատու յե:

Կարելի յե հաշվել, թե վորքան կնստի ելեկտրականութեամբ կալսելը ու ձիով կալսելը. այն գյուղերում, ուր ելեկտրոֆիկացիան ար-

դեն իրագործված ե, վաղուց արդեն հաշվել են այդ ու ահա թե ինչ են ստացել:

Վերցնենք, որինակի համար, լավ տնտեսութիւն: Թող լինի բերքը հազար բարդ (փոքրիկ դեղ). ձիաներով կալսելը նստում ե 277 բուբլի, իսկ յեկտրական կալսիչով՝ 206 բուբլի: Այդ — ելի թանգ ե ելեկտրականութեամբ: Ոգուտը զգալի յե և այլ տեսակի աշխատանքների մեջ: Այդ հանգամանքը իսկույն նկատի յեն առել, որինակ, Ռյազանի նահանգի Սապոժք քաղաքի շրջակա գյուղացիները: Յերբ նրանց մոտ սկսեց աշխատել ելեկտրական կալսիչը, կուլակներն ու վաշխառուները համոզում ու հորդորում եյին չոգտվել նրանով:

Հոգալ նրա մասին շատ հեշտ ե: Նրանով աշխատելու համար վոչ մի հատուկ պատրաստութիւն չի պահանջվում. պետք ե բաց թողնել ելեկտրական հոսանքը և իրար յետևից խուրճեր ներս տալ. ոգուտը, բացի եժանութիւնից, այն ել ե, վոր նա ցորենն ու հաճարը նամ վիճակի մեջ ել ե կալում, այն ինչ ձիով կալսելու համար հարկավոր ե նախ չորացնել, այսինքն՝ ժամանակ ու աշխատանք վատնել: Բացի դրանից — բարդից ստացվում ե հացահատիկ կես փութով ավելի: Յերբ տեսան այդ բոլորը Սապոժի կուլակները, սկսեցին քանդել ձիու իրենց կալսիչ-

ները—հասկացան, վոր այլևս վոչ վոք նրանց չի դիմելու. դեռ եզ քիչ եր՝ սկսեցին խնդրել, վոր իրենց ևս թույլ տրվի ելեկտրական կալսիչից ոգտվելու:


Երնելու ելեկտրական մեքենան ևս (վեյալկա) շատ լավ ե գործ տեսնում: Փոքր մեքենան երնում ե որական 1000 փութ, ուրեմն, յեթե հիսուն, նույնիսկ ավելի տան համար ձեռք բերվի մի հատ, բոլորին ել հեշտությամբ կբավարարի: Ել ինչ խոսք, թե վորքան լավ կլինի, յերբ գյուղում ջրմուղ լինի: Առանց ելեքտրականության նրան չես անցկացնի, չափազանց թանգ կհաստի, իսկ փոքր ելեկտրական ջրհանը (նասոս) շատ լավ կաշխատի ու ջուր կմատակարարի: Յեթե 50 տնտեսություն մի ջրհան դնեն, նա ամեն մի տնտեսությանը ժամը վեց դույլ ջուր կհանի. բանջարանոցներն ել կարելի յե ջրել, հրդեհի պահուն ել անվտանգ կլինի:

Ու վորքան այլ գյուղական աշխատանքներ կարող ե թեթևացնել ելեկտրականությունը: Յեթե գյուղը քաղաքից հեռու յե, կաթը վաճառելը անհնարին ե ու կաթնատնտեսություն վարելը—անձեռնատու. իսկ ելեկտրական խնոցին ու սեպարատորը դրությունը անմիջապես փոփոխում են:

Այժմ մի այլ հարց: Մեր հացը հաճախ աղ-

տոտված, աղբակալված ե լինում. այդ պատճառով նա ավելի եժան ե գնահատվում ու պետությունը դրանից յերբեմն խոշոր վնաս ե կրում: Այստեղ դարձյալ կարող ե ոգնության գալ ելեկտրականությունը. կան շատ լավ մեքենաներ՝ հացահատիկները մաքրելու համար:

Դրանցից մեկը նկարված ե այստեղ (նկար 15-րդ): Մենք շատ քիչ ենք մտածում հացահա-



Նկ. 15. Հացահատիկներ մաքրելու մեքենա.

տիկները մաքրելու մասին ու դրանից խոշոր վնասներ կրում. այն, ինչ վոր կորցնում ե պետությունը՝ հացը արտասահմանում ծախելիս, դա պետք ե մի կերպ լրացնի, այսինքն՝ հավաքի ժողովրդից:

Գյուղացիական ամենալուրջ աշխատանքը—վարելը, հերկելը նույնպես կարելի յե վստահանալ

Ելեկտրականությանը: Ամերիկայում արդեն շատ տարիներ գործածվում են ելեքտրական արորները: Վոչ մի ձիաքարշաբոր այնպես ուղիղ ու կանոնավոր չի վերցնի հողը, ինչպես ուժեղ ելեկտրոարորը կամ տրակտորը. իսկ կանոնավոր հերկելը տալիս է ավելի մեծ բերք: Ամերիկայում միջին բերքն է 120—140 փուլթ դեսյատինից. այդպիսի բերք մենք չենք ել յերազում:


Իսկ փորքան կարող է տնային աշխատանքը թեթևացնել ելեկտրականությունը:

Վերցնենք, թեկուզ, ատաղձագործությունը կամ խառատությունը: Լավ դուռ շինելու համար պետք է աշխատել առնվազն յերկու որ. իսկ ելեքտրական գործիքի ոգնությամբ նույն յերկու որվա ընթացքում կարելի յե շինել հինգ դուռ. ուրեմն արտադրողականությունը մեծ չափերով բարձրանում է:

Ավելի կա ձեռնտու յե ելեկտրականությունը հացագործության մեջ: Փորձված հացթուխը մի ժամվա մեջ կարող է պատրաստել ամենաշատը յերեք ու կես փուտ ալյուր, իսկ ելեկտրական մեքենայով նա նույն մի ժամվա ընթացքում կպատրաստե 35 փուլթ: Բացի դրանից, խմորն ել ավելի լափն է ստացվում՝ ավելի փափուկ ու հավասար: Իսկ ամենաշատ ծախսը ելեկտրականության վրա կլինի չնչին գումար—միայն յերկու կոպեկ մեկ փուտ հացին:

Այդպիսով, աշխատանքի արտադրողականությունը բարձրանում է տասն անգամ, իսկ ծախսը՝ աննշան է:

Ելեկտրականությունը կարող է շատ թեթևացնել նաև մի շարք կանացի աշխատանքներ. ինչն՞ր ասես չեն անում այլ յերկրներում ելեկտրականության ոգնությամբ,—լվացք են անում ելեկ-



Նկ. 16. Շարը արթուկում է ելեքտրական արթուկով:

տրական լվացարաններում, արթուկում են շորը ելեքտրական արթուկներով (հուլիո): Տես (նկար 16):

Նրա համար վո՛չ վառարան է հարկավոր վառել, վո՛չ ածուխ այրել: Վոչ շոգ կլինի, վոչ ծուխ:

Վոչ ել այդ տեսակ արթուկը լվացքը կկեղտոտի կամ կայրի: Տանտիկնոջ համար ելեկտրական արթուկը առաջնակարգ բավականութունն է:

Ահա մի այլ աղտոտ աշխատանք ևս, վոր կարելի է հանձնել ելեկտրականությանը. կա ելեկտրական մեքենա հատկապես կարտոֆիլ մաքրելու. նա փոքրիկ յերկաթե վառարանի յե նման:

Կարտոֆիլը լվանում են և դնում մեքենայի մեջ ու բաց թողնում հոսանքը. մեքենան սկսում է բզզալ ու դուրս ձգել դոնակից կարտոֆիլները՝ մեկը մյուսի յետևից: Այդպիսի մեքենան առանձնապես տեղին է այնտեղ, ուր միանգամայն մեծ թվով մարդկանց համար ճաշ ե պատրաստվում:

Ամենագլխավորը, ինչ վոր տալիս է ելեկտրականությունը, դա — աշխատանքի արագությունն է ու մաքրությունը:

Ով յեղել է այլ յերկրներում և ուսումնասիրել է այնտեղի կյանքը, նա գիտե, վոր այնտեղ ավելի արագ են աշխատում, ավելի մաքուր. դրանից ել՝ գանազան առարկաներ նրանց ավելի եժան են նստում: Մինչ մեր ատաղձագործը շինի մի դուռ, գերմանացին, ելեկտրականության շնորհիվ, հինգը կշինի: Պարզ է վոր գերմանացին այդ դուռը մեզանից եժան կծախի ու դրանից ստացվում է, վոր մեզ մոտ ամեն ինչ

ավելի թանգ է ու մենք ել՝ ավելի աղքատ: Պետք է, վոր մենք ըստ կարելույն շուտով լավացնենք մեր աշխատանքը ու բարձրացնենք աշխատանքի արտադրողականությունը: Յեթե հաջողացնենք այդ — մեր առաջ կբացվի լայն ճարտարն դեպի յերջանիկ, կուշտ ու հանգիստ կյանք: Չենք հաջողացնի — կխեղդե մեզ բուրժուազիան, թեև վոչ մեր բուրժուազիան, այլ ոտար, բայց մեր գործն ելի դրանից դժվար կլինի:

Այս բոլորը շատ լավ հասկանում եր բանվոր դասակարգի առաջնորդ ընկեր Լենինը ու նա ցույց տվեց մեզ ուղին, վոր տանում է դեպի լավագույն կյանքը: Այդ ուղին անցնում է ելեկտրոֆիկացիայով: Նա մեզ թույլ կտա շրջանառության գցել մեր բոլոր հարստությունները. Ամեն բան առատ է մեզ մոտ — և լիաջուր գետեր, և խիտ անտառներ, և քարածուխը գետնի տակ, և տորֆը ճահիճների մեջ, և թանգարժեք հանքաշերտերը լեռներում, և նավթ: Ու այդ բոլորը մենք շատ քիչ ենք օգտագործում:

Արդեն վաղուց ի վեր այլ յերկրների կապիտալիստները աչք են դրել այդ չօգտագործված հարստություններին, վաղուց յերագում են նրանց կաշուն ճանկերն այդ բոլորը: Մենք կարողացանք այդ ամենը պաշտպանել ու պահպանել. բայց պետք է մտածել և վաղվան

մասին. պետք է իմանալ պաշտպանվել ու պաշտպանել մեր ունեցածը: Իսկ դրա համար պետք է նախ և առաջ արտադրել վորքան կարելի յե շատ բան ամեն տեսակի—և հաց, և կտավատ, և կաթ, և յուղ, և բուրդ, և ամեն տեսակ գործարանային ապրանքներ:

Ելեկտրոֆիկացիան կ'ոգնի մեզ իրագործել այդ: Նրա միջոցով մենք կհասնենք լավ կյանքի:

Դուք ինձ կհարցնեք, անշուշտ, ինչպես սարքել ելեկտրոֆիկացիան այստեղ, մեզ մոտ, մեծ քաղաքից հեռու, հեռու այն մեծ ելեկտրական կայարաններից, վոր կառուցվում են ներկայումս Խորհրդային Միության գանազան վայրերում:—Դուք առաջինը չեք լինելու այդ գործում: Արդեն Խորհրդային Միության գանազան մասերում — և հեռավոր հյուսիսում, Սպիտակ ծովի ափերին, և տաք հարավում, և Ուկրաինայում, և Կովկասում, և Միբիրում—ամենուրեք սկսում են գյուղացիները իրանք անցկացնել ելեկտրոֆիկացիա, բարելավել իրենց կյանքը: Ուր կա արագահոս գետակ—հարմարեցնում են դինամո-մեքենան, ուր կա մոտ տեղ գործարան — դա յեն ոգտագործում: Սակայն, դա մի այնպիսի գործ է, վոր մենակ մի գյուղի ուժից վեր է. ավելի ձեռնտու յե դնել մեծ գինամո-մեքենա, —այդ դեպքում ելեկտրական հո-

սանքը ավելի եժան է նստում, այլև, բացի խրճիթները լուսավորելուց, կարելի յե ոգտագործել գանազան աշխատանքների համար:

Հենց դրա համար էլ հարկավոր է մի քանի գյուղերին միանալ այդ գործի շուրջը:

Այժմ մի ուրիշ հարց—վորտեղից փող ճարել: Այստեղ, անշուշտ, պետք է մի քիչ ձիգ թափել —անտեսել, մի քիչ փող հավաքել:

Ի հարկե, միանգամից այնքան փող չես հավաքի, վոր բոլոր ծախսերը փակես. ուրեմն պետք է նպաստ խնդրել Խ. Իշխանությունից: Ռուսաստանի գյուղերի ելեկտրոֆիկացիայի համար Մոսկվայում կա մի հիմնարկություն՝ «Ելեկտրոկոնեյիս», վորին և զիմում են: Այնտեղ ամեն ինչ սնանքամասնորեն քննում, խորհուրդ են տալիս կառուցման համար, անհրաժեշտ պարագաները գնելուն ոգնում են և նպաստ էլ են տալիս մի քանի տարով —աստիճանաբար, տարեցտարի վճարելու պայմանով: Յեթե վորևե պատճառով չի հաջողվում համաձայնության գալ «Ելեկտրոկոնեյիտ»-ի հետ, սեփական ուժերով են սկսում գործը: Ահա թե ինչպես են արել ուսսական գյուղերից մեկում. գյուղացիները յերկար-բարակ մտածել են, հաշվել, չափել—և չեն բավականացրել միջոցները: Վորոշել են զիմել հարևան գործարանի ոգնությանը. ընտրել են

պատգամավորներ և ուղարկել հարեան մանվածային գործարանը, գործարանի բանվորները շատ սիրալիր ընդունել են նրանց, լսել են ուշադրութեամբ ու խոստացել հազար հինգհարյուր ըուբլի, այլ և խոստացել են կազմակերպել մի քանի կիրականորյակներ ու դրանց ամբողջ յեկամուտը հատկացնել գյուղի ելեկտրոֆիկացիային: Գյուղացիներն ել իրանց հերթին վերցրել են իրանց վրա պարտականութիւն՝ ամբողջ համայնքով մշակել մի լավ բոստան, և դրա բերքը ամբողջովին հատկացնել գործարանին կից մանկական հիմնարկութիւններին: Այդպիսով ստացվեց իսկական սերտ ու գործնական կապ, զորում՝ գործարանային բանվորների ու գյուղացիների միջև:

Հարկավոր է վոր դուք ել լավ մտածեք ելեկտրոֆիկացիայի մասին, հաշիվներ անեք ու վորոնեք շրջակայքում ելեկտրական ուժի աղբյուր: Հարկավոր է այդ գործին գրավել մեր կոոպերատիվը: Ով այդ գործով հետաքրքրվի, տարվի, ուզենա նրա համար լավ աշխատել, ուզենա հասկանալ, թե ինչ ոգուտ կլինի ելեկտրոֆիկացիայից ամբողջ շրջանի համար ու ամբողջ պետութեան համար, նա պետք է գրքեր կարդա*):

*) Վերջերս ԽՍՀՄ Ժողովուրդների կենտրոնական Հրատարակչութիւնը նաև հայերեն մի գրքույկ է տպել—«Ինչպիս կարելի յէ գյուղում ելեկտրականութիւն անցկացնել»: Արժե 15 կոպ.

Իսկ այժմ, տեսնում եմ, ժամանակը ուշ է: Գուցե ելի մի որ հավաքվենք ու կրկին կխոսենք ելեկտրոֆիկացիայի մասին:

Սրանով ժողովը վերջացավ: Բայց յերիտասարդութիւնը դեռ չեք ուզում ցրվել և շարունակվում ելին հարցերն ու զրույցները. բանը առանց հանաքների ու ծիծաղի չանցավ: Արդեն լուսանում եր, իսկ դեռ լավում ելին այս ու այն կողմից յերգի հնչուններ, Հին յերգերին մի նորն ել ավելացավ. թե ով հնարեց, ով հորինեց այդ յերգը—մնաց անհայտ:

Այդ յերգի մեջ ելեկտրոֆիկացիայի մասին եր խոսվում:

պատգամավորներ և ուղարկել հարեան մանվածային գործարանը. գործարանի բանվորները շատ սիրալիր ընդունել են նրանց, լսել են ուշադրութեամբ ու խոստացել հազար հինգհարյուր ըուբլի, այլ և խոստացել են կազմակերպել մի քանի կիրակնորդակներ ու դրանց ամբողջ յեկամուտը հատկացնել գյուղի ելեկտրոֆիկացիային: Գյուղացիներն ել իրանց հերթին վերցրել են իրանց վրա պարտականութուն՝ ամբողջ համայնքով մշակել մի լավ բոստան, և դրա բերքը ամբողջովին հատկացնել գործարանին կից մանկական հիմնարկութուններին: Այդպիսով ստացվեց իսկական սերտ ու գործնական կապ, զորովմ գործարանային բանվորների ու գյուղացիների միջև:

Հարկավոր է վոր դուք ել լավ մտածեք ելեկտրոֆիկացիայի մասին, հաշիվներ անեք ու վորոնք շրջակայքում ելեկտրական ուժի աղբյուր: Հարկավոր է այդ գործին զրավել մեր կոոպերատիվը: Ով այդ գործով հետաքրքրվի, տարվի, ուզենա նրա համար լավ աշխատել, ուզենա հասկանալ, թե ինչ ոգուտ կլինի ելեկտրոֆիկացիայից ամբողջ շրջանի համար ու ամբողջ պետութեան համար, նա պետք է գրքեր կարգա*):

*) Վերջերս ԽՍՀՄ Ժողովուրդների Կենտրոնական Հրատարակչութունը նաև հայերեն մի գրքույի է տպել—«Ինչպես կարելի յե գյուղում ելեկտրականութուն անցկացնել»: Արժե 15 կոպ.

Իսկ այժմ, տեսնում եմ, ժամանակը ուշ է: Գուցե ելի մի որ հավաքվենք ու կրկին կխոսենք ելեկտրոֆիկացիայի մասին:

Սրանով ժողովը վերջացավ: Բայց յերիտասարգութունը դեռ չեք ուզում ցրվել և շարունակվում ելին հարցերն ու զրույցները. բանը առանց հանաքների ու ծիծաղի չանցավ: Արդեն լուսանում եր, իսկ դեռ լավում ելին այս ու այն կողմից յերգի հնչուններ: Հին յերգերին մի նորն ել ավելացավ. թե ով հնարեց, ով հորինեց այդ յերգը—մնաց անհայտ:

Այդ յերգի մեջ ելեկտրոֆիկացիայի մասին եր խոսվում:

ԵԼԵՔՏՐՈՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Խ Ո Ր Հ Ր Դ Ա Յ Ի Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ո Ւ Մ .

Հայաստանի խորհրդայնացումը իր հետ բերեց շինարարութեան մի հսկա ծրագիր, մինչ այդ Հայաստանում չտեսնված ծրագիր: Խորհրդային իշխանութիւնը, կարճ ժամանակամիջոցի ընթացքում, հայտնաբերեց չտեսնված տոկոսնութիւնը և դժվարութիւնները հաղթելու յերկաթյա կամք: Ազգաբնակչութեան համար նախ ապահովելով կատարելապէս խաղաղ կյանքի պայմաններ, նա դաշնակիցներից ժառանգութիւնը մնացած արյունոտ ավերակներում սկսեց մի մեղմաշուն և համառ աշխատանք՝ տնտեսական և կուլտուրական կյանքի բոլոր բնագավառներում: Քաղցի և ավերածութեան այդ շրջանում ցնորք ելին թվում մանավանդ անշրջի հողերի վոռոգման և ելեքտրոֆիկացիայի ծրագրները: Բայց այսօր մենք տեսնում ենք, վոր բազմազան և բազմաթիվ ձեռնարկութիւնների շարքում, Հայաստանում կառուցվել են նաև մի շարք ջրանցքներ, որինակ 1) Եջմիածնի ջրանցքը, վոր վոռոգում է 1200 դեսյատին հող, գյուղացիական հողի ֆոնդը ավելացնելով 600 դեսյատինով, 2) Եվջիւարի ջրանցքը,

վոր հողերի ֆոնդին ավելացրեց 1500 դեսյատին, 3) Շիրակի ջրանցքը, վոր նստեց 1,600,000 ուրուլի և վոռոգում է 12,750 դեսյատին հող, գյուղացիներին տալով տարեկան 751,800 ու ավելի յեկամուտ, 4) Սարգարապատի ջրանցքը, վոր վոռոգում է 24,000 դեսյատին հող, և այլն: Այդ ջրանցքներից յերկուսի վրա արդեն հիմնվել են հիդրո-եղեքտրոկայաններ, վորոնց եներգիան կարելի կլինի ոգտագործել ինչպես լուսավորութեան, այնպես և արդյունաբերական նպատակների համար: Արդեն ավարտվեց և հանդիսավոր կերպով բացվեց Յերևանի հիդրո-եղեքտրոկայանը: Այս առաջին կայանը գյուղատնտեսութեան մեջ միայն վորո՞չ չափով կարող է փոխարինել գյուղացիութեան լծկան ուժը՝ յեզն ու գոմեշը, միայն վորո՞չ չափով կարող է բարձրացնել մեր հողագործութեան և գյուղատնտեսութեան նախադարյան տեխնիկան: Նշանակալից չափով նա ծառայելու յե վոռոգման նպատակների, մեքենայական վոռոգմանը՝ ջուր մատակարարելով Եջմիածնի գավառի մի քանի հազար դեսյատին անշրջի հողերին: Այդ հիդրո-կայանը Յերևանի շուրջը կստեղծե խոշոր ինդուստրիալ ոջաղ՝ եներգիա մատակարարելով թե արդեն գոյութիւն ունեցող և թե նոր հիմնվելիք արդյունաբերական ձեռնարկութիւններին: Կայանի

2,800 ձիու ուժը հավասար է 28,000 եժան բան-
վորական ձեռքերի, վորոնցով հարստանում է
մեր յերկիրը: Այդ կայանը առաջին ուժեղ և ամե-
նաեժան ելեքտրո-կայանն է ամբողջ Խորհրդա-
յին Միութեան մեջ:

Շիրակի ջրանցքի գլխամասի կառուցումով՝
Շիրակի հիդրո- կայանի աշխատանքերի 50 տո-
կոսը պատրաստվել էր. մնում էր կայանի շէնքի
կառուցումը, նրա սարքավորումը և ցանցը. ու
այդ բոլորը պատրաստ կլինի այս տարի և կու-
նենանք 5,000 ձիու ուժ ունեցող ելեքտրո-կա-
յան: Այս կայանը տալու յե մեզ չափազանց աժան
ելեքտրական եներգիւ, շատ ավելի աժան, քան
Վոլխովստրոյն է, կամ Զագեսը, կամ Յերևանի-
նը: Շիրակի հիդրո-ելեքտրոկայանի ուժը առանց
մեծ ծախքերի կարելի կլինի հասցնել 7,500-ի:
Քաղաքի լուսավորմանը, արհեստանոցներին, գոր-
ծարաններին ծառայելուց բացի, ելեքտրոկայա-
նը կարող կլինի շատ եժան լույս տալ նաև ամ-
բողջ գավառին, ելեքտրավորել գյուղատնտեսու-
թյունը, յերկրագործությունը, փոխարինելով
տասնյակ հազարավոր բանվորական ձեռքերի, և
այդպիսով կբարձրացնի այդ շրջանի բնակչու-
թյան տնտեսական վիճակն ու արդյունաբերու-
թյունը: Խ. Հայաստանի Հանրապետութեանը
այս կարճ ժամանակամիջոցում այդ խոշոր ձեռ-

նակներով, ինչպես նաև յերկրի մի քանի ան-
կյուններում փոքրիկ ելեքտրակայաններ հիմնե-
լով չի բավականանում. նա կազմել է Հայաստա-
նի ելեքտրոշինարարութեան մի հսկա, սակայն
շատ ուշալ, իրական, շատ մոտիկ ապագայում
իրականալի ծրագիր: Համաձայն այդ ծրագրի,
Յերևանի ելեքտրո-կայանի եներգիւան հասցվելու
յե 5,600 ձիու ուժի, Շիրակի ելեքտրո-կայա-
նինը 7,000 ձիու ուժի: Հիդրո-ելեքտրոկայան է
շինվում (աշխատանքները վերջանալու վրա յեն)
Իջևանում: Ստեփանավանի հիդրո-ելեքտրոկայա-
նի աշխատանքները կվերջանան 27 թվի սկզբին:
Մեղրում ևս հիդրո-ելեքտրոկայանը պատրաստ
կլինի 1927 թվին:

Այս ամենը Հայաստանի համար մինչ այժմ
չտեսնված փաստեր են: Ներկայի այս ամեն աշ-
խատանքը զբավական է, վոր առաջիկա հնգա-
մյակում և տասնամյակում կարելի կլինի լուսա-
վորել մեր յերկրի մնացած խուլ անկյունները,
ելեքտրականութեան ուժով բարձրացնել մեր յեր-
կրի արտադրութեանը, ելեքտրականութեան ուժով
անջրդի բոլոր հողերը վտուգել, հողագործութեան
դաժան պայմանները թեթևացնել և գյուղացու
տնտեսական ու կուլտուրական զրությունը ան-
ձանաչելի վիճակի հասցնել: Խմբ.

ԲՈՎԱՆԴ ԱՎՈՒԹԻՈՒՆ

	Եջ.
<i>Ներածություն</i>	3
Գլուխ I.	
<i>Ելեֆրակսն կայծր</i>	6
Գլուխ II.	
<i>Ինչպես կայծակը ամպերից գետին իջեցրին</i>	26
Գլուխ III.	
<i>Ինչ է կայծակը ու ինչպես է նա գործում</i>	28
Գլուխ IV.	
<i>Զրույց՝ ելեֆրոմ իկազիսայի մասին</i>	63
<u>Հավելված</u>	
<i>Ելեֆրոչինսարարությունը Խորհրդային Հայաստանում</i>	82


ԽՈՐՀՐԴ. ՍՈՑ. ՀԱՆՐ. ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

— Հայկական սեկցիա —
Մոսկվա, Նիկոլսկի փող. № 10

- Ի. ՍՏԱԼԻՆ. — Գյուղացիական հարց: Գինը 50 կոպ.
- Ի. ՍՏԱԼԻՆ. — Ազգային հարց: (Տպագրվում է):
- Վ. ԼԵՆԻՆ. — Պատգամներ յերիսասարդության. գինը 15 կ.
- Ի. ՖԼԵՐՈՎՍԿԻՅ. — Մեր առաջին բանվ.-գյուղ. հեղափոխությունը. Գինը 70 կ.
- Ն. ԿՐՈՒՊՍԿՅԱ. — Լենինի պատգամներ ժողովրդական լուսավորության մասին: Գինը 20 կ.
- Լ.Ս.ՎՐԵՆՏՅԵՎ. Ինչպես աշխուժացնել խորհուրդները. գ. 30 կ.
- Զ. ՅԱՎՈՐՍԿՅԱ. — Կարա Յեսկին (կենսագր.): Գինը 10 կ.
- Ն. ՏՅՈՒՐՅԱԿՈՒԼՈՎ. — Ազգ. հարցը յեվ դպրոցը: գ. 40 կ.:
- Բ. ԺԱՎՈՐՈՆԿՈՎ. — Հասարակագիտությունը 1 աստիճանի դպրոցում: գինը 65 կ.
- Ն. ՅԵԼԻՉԵՆՈՎ. — Ինչ վորոշեց կուս. XIV համագ. 112 էջ, գ. 30 կ.:
- Ա. ԳՄԻՏՐՅԵՎ. — Տգիտությունը յեվ սնահավասությունը: Գինը 15 կ.
- Մ. ԼԻՎՆԵՆՍԿԻ. — Գյուղատնտեսական հարկ: Գինը 20 կ.
- ՅԵՍԻՊՈՎ. — Գյուղացիության պահանջները յեվ խորհրդային դպրոցի ծրագրերը: Գինը 12 կոպ.
- Պ. ՎԼՍՍՈՎ. — Հողի մեակումը յերաշխ ժամանակ: Գինը 40 կոպ.
- Լ. ՅՈՉԵՖՈՎԻՉ. — Գյուղ կանգնի գերան կկոսրի (կոպտերացիան գյուղում): Գինը 30 կոպ.
- Ի. ՊՈԴՅԱՊՈՎՍԿԻ. — Աստու կամեր բե՛ գյուղատնտեսական գիտությունը: գինը 20 կ.
- Ա. ԿՐՍՎՉԵՆԿՈ. — Թե ինչպես կարելի յե գյուղում ելեֆրակսություն անցկացնել: Գինը 15 կ.
- Պ. ԼԻՆՍԵՎ. — Խոզը գյուղացիների կերակրողն է: Գ. 18 կ.:
- Ն. ԲՐԱՆԻՎԻ. — Թե ինչպես գերմանացին ստիպեց, վոր կովը սարին յերկու անգամ ձնի. Գ. 15 կ.:
- Ա. ՍԿՈՄՈՐՈՆՈՎ. — Ինչպես բնօրին կարևորաց կով: Գ. 12 կ.
- Ա. ՍԿՈՄՈՐՈՆՈՎ. — Օռաջին ոգնությունը հիվ. կենդանուն: Գ. 17 կ.

- Ա. ԲՐԱՆՍԲՈՒՐԳ.—Անճանի կենդանիների վարակիչ
հիվանդությունները: Գիրք 17 կ.
- Ն. ՍԵՄՍՇԿՈ.—Թոփախ. (պակերազարդ): Գիրք 25 կ.
- Բ. ԳԻՆՍԲՈՒՐԳ.—Յերեխաների վարակիչ հիվանդություն-
ները. գ. 30 կ.
- Վ. ԲՐՈՆՆԵՐ.—Վեներական ախտեր. Գիրք 25 կ.
- Ա. ՍՊԵՐՍՆՍԿԻ.—Մոր ալքեմարանը. (պակ.): Գ. 16 կ.
- Ն. ՍԵՄԵԿԻՆ.—Արեժը, նրա վորդիները յեժ բոսները:
- Վ. ՅԱԶՎԻՅԿԻՅ.—Մարդկային բնակարանի պատմութ.:
Գիրք 15 կ.
- Դ. ԳՐՍՎԵ.—Ինչպես է սարքաված սիլեգերբ. (սպագր.).
ԳՐԵՄՅԱՅԿԻՅ.—Վորոս, կայծակ յեժ էլեկտրականություն:
Ա.ԳՈՒ.—Կենդանիների յեժ մարդու ծագումը:
- Մ. ԳՈՐԿԻՅ.—Յերիսասարդ գրողը: Մարդը: Գիրք 15 կ.
- Ա. ՍԵՐՍՅԻՄՈՎԻՉ.—Պատմվածքներ:
- Դ. ՄԱՄԻՆ-ՍԻԲԻՐՅԱԿ.—Մոժակի յեժ արջի մասին: (Պատ-
կերագրող), գ. 15 կ.
- Պ. ՈՐԼՈՎՆԵ.—Ճամբորդություն այերուպյանով: (Պատ-
կերագրող). Գիրք 22 կ.
- Պ. ՈՐԼՈՎՆԵ.—Քիմիկոս Կուզկուն: (Պատկերագրող): Գի-
րք 28 կուպ.:
- Ա. ԿՈՒՊՐԻՆ.—Յերկրի խաբեում: (Պատկերագրող): Գի-
րք 15 կուպ.
- Ա. ՆԵՎԵՐՈՎ.—Ինչպես էլին ապրում սիկնիկները յեժ
ինչ արեց արեինե զինվորը: (Պատկ.): Գիրք 16 կ.:
- Ա. ԿՐՍՎՉԵՆԿՈ.—Ինչպես Սաֆոն կարևիր բանակային
դարձով: գ. 35 կ.
- Յ. ՅՈՒՔՍ.—Մինիստր մեկ ժամով: (Պատկերագրող): Գի-
րք 18 կուպեկ:
- ՅԵ. ՌԱԴԻՆ.—Պիտեր, պահպանիր առողջությունը: Գի-
րք 10 կուպեկ:
- Պ. Ռ.—Պատանի պիտներ: Ժողովածու: (Պատկ.). Գիրք 60 կ.
- Պ. ԽԼԵՑՆԻԿՈՎ.—Կարտրատորները: գիրք 45 կ.
- Ս. Լ.—Գեղջկուհին յեժ յերեխաները:
«Թոչուններ», գունասիպ այլբոմ մանուկների համար.
գիրք 20 կուպ.:

Գիրքը՝ Москва, Никольская 10. Центриздату.
Կամ Յերեխան Երևանի Պետհրատին:



«Ազգային գրադարան»



NL0269324

377
ԳԻՆԸ 4019580

12192



М. ГРЕМЯЦКИЙ.

**Гром, молния и
электричество.**

На армянском яз.

Центральное Издательство Народов Союза С С Р

Москва

Никольская, 10.